# ՍԻՈՆ

## ԱՄՍԱԳԻՐ

### ԿՐՕՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ




ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏ. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ 1955 ԻԹ. ՏԱՐԻ

«سيون» مجلة ارمنية شهرية، دينية، ادبية، ثقافية، للغة والبيان

"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


| | | Էջ |
|---|---|---|
| **ԽՄԲԱԳՐԱԿԱՆ** | | |
| — Ազգային-եկեղեցական տօներ եւ ուսումնական մեր տարին | | 145 |
| **ԿՐՕՆԱԿԱՆ** | | |
| — Հոգեգալուստ | ԶԱՒԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ Չ. | 149 |
| **ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ** | | |
| — Դեղոն հայերէն լեզուին | ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ | 152 |
| — Վերյիշում | Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ | 152 |
| — Տրտմութիւն | ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ | 153 |
| — Սերմնացանի պէս | Վ. ԳՐԻԳՈՐԵԱՆ | 153 |
| — Ամրան իրիկուն | ԶԱՒԷՆ Վ. Չ. | 154 |
| **ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ** | | |
| — Պապ Արշակունի | ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԷՆ | 155 |
| **ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ** | | |
| — Գործք Առաքելոց | ՊԱՐԳԵՒ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ | 159 |
| **ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ** | | |
| — (Խեւ) Յովհաննէս Թլկուրանցի | Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ | 162 |
| **ԵԿԵՂԵՑԱ-ՊԱՏՄԱԿԱՆ** | | |
| — Մեր նախնեաց հաւատքը (Նկատողութիւններ) | Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ | 164 |
| **ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ** | | |
| — Միջնադարեան հայ կոմպոզիտորներ | ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ | 166 |
| **ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ** | | |
| — Աւստրալիոյ Հայ գաղութը | ԱՍՈՂԻԿ Ծ. ՎՐԴ. ՂԱԶԱՐԵԱՆ | 169 |
| — Տպաւորութիւններ Հնդկաստանէն | ԲԱԲԳԷՆ ՎՐԴ. | 172 |
| **Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ** | | |
| — Եկեղեցական-Բեմական | | 175 |
| — Պաշտօնական | | 175 |
| — Շնորհակալիք | | 176 |



ՍԻՈՆ-ի Տարեկան բաժանեգինն է՝
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20



*Redaction of the Armenian Monthly SION*
*Armenian Patriarchate,*
*P. O. B. 4001*
*Old City - Jerusalem*
*Via Amman (Jordan)*



digitised by A.R.A.R.@

# — ՍԻՈՆ —

ԻԹ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1955 ՅՈՒՆԻՍ ԹԻՒ 6


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

## ԱԶԳԱՅԻՆ–ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԵՐ

ԵՒ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵՐ ՏԱՐԻՆ



*Քրիստոսի Յարութենէն ետք, մինչեւ Հոգեգալստեան տօնը, յիսուն օրեւրու շրջան մը կը բոլորէ Հայց. Եկեղեցին որոնք կը կոչուին* Յինանց*: Հոգեգալստեան տօնին՝ Ս. Հոգին վերնատան մէջ, կրակէ լեզուներով կ'իջնէ պէս–պէս շնորհներով զարդարելու Առաքեալները և անոնք հրազինուած Ս. Հոգիով կ'երթան աշխարհի չորս ծագերը քարոզելու* Կենաց Բանը:

*Հոգեգալստեան տօնէն ետք, մեր երանելի հայրապետներու կարգադրութեամբ, Հայց. Եկեղեցին հանդիսաւորապէս կը տօնախմբէ չորս մը ազգային տօներ. Ս. Գրիգոր Լուսաւորչի ելն ի վիրապէն, Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի, Ս. Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ: Հարկ կա՞յ անգամ մը եւս շեշտելու թէ մեր Եկեղեցին էապէս և գերազանցապէս Ազգային Եկեղեցի մըն է, լայնագոյն իր իմաստին մէջ ըմբռնուած.*

digitised by A.R.A.R.@

և պահապանները ազգային անառարկելի սոյն արժէքներուն։ Որքա՜ն արժեցուցինք մենք զմեզ մեր լուման նետելով Ազգային-Եկեղեցական գանձանակին մէջ։ Վասնզի ինչ որ կը ձգենք հոն խոնարհաբար և հաւատարմաբար, թէկուզ «երկու լումայ», տակաւ պիտի վերադարձուի մեզի աւելի քաղցրացած և անուշցած, միշտ ի փառս և ի շինութիւն Հայաստանեայց Եկեղեցիին և Հայ Մշակոյթին։

Կը ներենք ինքզինքնուս այս շեղումը Ազգային-Եկեղեցական տօներու ընդհանուր բացատրութենէն, նկատի ունենալով որ ահաւասիկ իր լումին կը հասնի ուսումնական տարեշրջանը և մենք կը մնանք կառչած մեր հաւատքին և մեր մշակոյթին, մարդկայնօրէն կարելիութեան սահմանին մէջ, չկորսնցնելու համար արժէքներ՝ որոնցմով կ'երաշխաւորուի ամենէն առաջ մեր գոյութիւնը։ Մասնաւորելով մեր խօսքը Երուսաղէմի և Յորդանանի համար, գոհութիւն Աստուծոյ, շարունակուող քաղաքական անստոյգ կացութեան մը և անտեսական առաւել անստոյգ շրջանի մը ընթացքին տարի մը ևս բոլորեցինք դպրոցական շինարար աշխատանքի։ Այժմ, Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանը ունի երեսուն սաներ, բաշխուած չորս դասարաններու վրայ, որոնցմէ աւարտական դասարանի երեք աշակերտներ կը պատրաստուին ընդգրկել եկեղեցական ասպարէզ, ընդունուելու համար Ընծայարանի կարգը։ Կը սպասուի տակաւին նոր աշակերտներու, որոնք խնամեալ դաստիարակութենէ մը ետք, պիտի հասնին բազմակարօտ մեր ժողովուրդի կրօնական և մշակութային սպասին, մխիթարելով և ուսուցանելով։ Ունինք չորս Սարկաւագներ որոնք ժամանակ մը ետք պիտի ընդգրկեն կրօնական ասպարէզ, մտնելով Ս. Աթոռոյս Միաբանական Ուխտի շարքէն ներս։

Երուսաղէմի մեր միւս վարժարանը, Ս. Թարգմանչաց Նախապատրաստական և երկրորդական ուսման վառարանը, որ ունի աւելի քան 600 երկսեռ աշակերտութիւն, կ'աւարտէ ուսումնական տարեշրջանը գոհացուցիչ արդիւնքներով, հաւատարիմ մնալով Ազգային Ոգիին և Հայ Մշակոյթին։ Ասկէ զատ, յառաջիկայ տարի աւարտական դասարանի աշակերտները պիտի ներկայացուին Լոնտոնի Համալսարանին General School Certificateի քննութիւններուն։

Նորին Ամենապատուութիւն Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան, Ս. Աթոռոյս Պատրիարքական Տեղապահը, զգալով կարիքը նիւթական ապահովութեան, առանց դադարման յառաջ տանելու համար ազգային հպարտութիւն մը հանդիսացող Ս. Աթոռին կրթական և բազմապիսի այլ կարիքները, արդէն իսկ մեկնած է Եւրոպա, հոն տանելով բազմաշնորհ իր անձին հմայքը, իր խօսքին ջերմութիւնը և իր հաւատքին հուրը, խնդրելու աջակցութիւնը ազնիւ և առաքինի բոլոր այն հայորդիներուն՝ որոնք գիտցած են և գիտեն իրենց լուման նետել ազգային Եկեղեցւոյ և Հայ Մշակոյթի գանձարանին, որպէսզի տեւականանան մեր հաւատքն ու սքանչելի մշակոյթը։

Երուսաղէմէն դուրս, Յորդանանի Ամման մայրաքաղաքին մէջ ունինք տակաւին Հեթումեան Ազգային Վարժարանը, 250 երկսեռ աշակերտներով. մայրաքաղաքէն քիչ մը հեռու, Ուէյֆայի վարժարանը։ Իսրայէլի մէջ՝ Յոպպէի և Հայֆայի վարժարանները։

digitised by A.R.A.R.@

## ԿՐՕՆԱԿԱՆ

# ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

«Նոյն եւ նման Հօր եւ Որդւոյ
Հոգիդ անեղ եւ համագոյ.
Բղխումըն Հօր անծըննաբար
Առեալ յՈրդւոյ անճառաբար.
Ի վերնատունն այսօր իջեր՝
զՀոգիդ շնորհաց ծով արբուցեր.
Արբո եւ մեզ ողորմութեամբ
Ի բաժակէդ իմաստութեան»:

(ՇՆՈՐՀԱԼԻ)

Քաղաքակրթութեան խանձարուրային աստիճանին վրայ գտնուած ատեն իսկ մարդը ունեցած է տարտամ և անորոշ գաղափար մը հոգիի մասին։ Հին Յոյները կը հաւատային թէ հոգին մարդուն մէջ ամենէն կարևոր մասն է որ թէև անտեսանելի՝ բայց կենդանի է և գերբնական բնոյթ մը ունի։ Հին ժողովուրդներ ալ, Եգիպտացիներ, Բաբելացիներ և արևելեան հեռաւոր ժողովուրդներ կը հաւատային հոգիի անմահութեան։ Սակայն, ժամանակի ընթացքին, աստուածային յայտնութեամբ, Հոգիի մասին մարդիկ ունեցան որոշ գաղափարներ։ Երբ կը բանանք Աստուածաշունչը, առաջին իսկ էջին մէջ կը կարդանք «Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» (Ծննդ. Ա. 2)։ «Զհոգի քո սուրբ մի հաներ յինէն» (Սաղ. Ծ)։ «Հոգի Տեառն վերացաւ ի Սաւուղայ» (Ա. Թագ. ԺԹ. 20), ևայլն։ Հրեաներուն համար հոգին զօրութիւն մըն էր որ իբրև պարգև ընտրեալ մարդոց կը տրուէր Աստուծոյ կողմէ, և անոնք կը մարգարէանային։ Սակայն հոգիի իմացումը Քրիստոնէական Վարդապետութեան մէջ կը գտնէ իր լրումը։ Հոգին աստուածային շնորհ մը և պարգև մըն է որ քրիստոնէին կը տրուի մկրտութեամբ։ Այսպէս Մաշտոցի մէջ կը կարդանք «. . . եւ ընդունելով զՀոգի քո սուրբ մարմին և անդամ եղիցի Եկեղեցւոյ քում սրբոյ»։ (Տպ. Երուս., 1933, էջ 20)։

Հայաստանեայց Եկեղեցին Հոգեգալուստը կը տօնէ Յարութենէն յիսուն օր ետք կամ Համբարձումէն տասը օր ետք։ Յիսուսի տնօրինական հրաշագործութիւններէն, քարոզութիւններէն, Երուսաղէմ յաղթական մուտքէն մինչև Խաչելութիւնը, Թաղումը և Յարութիւնը, տարօրինակ հոգեվիճակներէ կ՚անցնէին աշակերտները. յոյսի և յուսալքութեան վիճակներէ կ՚այցուէին։ Թէև Յարութեան հրաշալի իրողութիւնը տարակուսանքի ամենէն յետին նշոյլն անգամ յստակացուցած էր անոնց մտքերուն մէջ և ամէն բան պայծառ էր անոնց այլևս՝ այսուհանդերձ, աշակերտները տակաւին չէին սկսած իրենց առաքելական գործին։ Կային անոնց մէջ այնպիսիներ որոնք կը վախնային նոյնիսկ իրենց քրիստոնէութիւնը յայտարարելէ և կ՚ապրէին անշշուկ։ Բայց ի՞նչպէս խոնարհ գաւակարգէ մը ընտրուած աշակերտները, — պա՞րզ ձկնորսներ —, յանկարծակի փոփոխութեամբ մը կը դառնան անվեհեր քարոզիչներ և արհամարհելով մահը կը կենան պողոտաներուն մէջտեղ և ամենուրեք ու կը քարոզեն իրենց և ամենուն յարուցեալ Փրկիչը։ Ներքին այս կերպարանափոխութիւնը հրաշքով մը կը բացատրուի որ տեղի ունեցաւ վերնատան մէջ, ուր, ինչպէս կը նկարագրէ Գործք Առաքելոցի հեղինակը, Զատկէն յիսուն օրեր ետք առաքեալները

---

Այս առնչութեամբ և բազմաթիւ նման կարիքներ դիմաւորելու հարկադրանքով, տարիէ մը ի վեր Ս. Աթոռոյս Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ՝ Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբիկեան կը գտնուի Միացեալ Նահանգներ, իբրև Ս. Աթոռոյ Նուիրակ, աշխատելով որ ճշմարիտ Հայերու սրտին նուիրականացած ձիթերովը անմար մնան Ս. Երուսաղէմի Տնօրինական Սրբավայրերու մէջ Հայց. Եկեղեցւոյ, Ս. Լուսաւորչի հաւատքին կանթեղները, որ չգադրի Ս. Աթոռոյս Տպարանի մամուլը ճռնչելէ, որ չգադրի Հայ մանկտւոյն բերնին մէջ Մեսրոպեան «Մեծասքանչ Բարբառը»։

Զ. Վ. Զ.

digitised by A.R.A.R.@

և այլք, իւղաբեր կիններուն հետ, 120 հոգի հաւաքուած էին և կը յաւելու թէ ինչպէս «եղև յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ հողմոյ, և ելից զամենայն տունն յորում նստէին. և երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա։ Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով, և սկսան խօսել յայլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել նոցա» (Գործք, Բ. 2–4)։

Մի՞թէ առաքեալները տակաւին կը սպասէի՞ն ուրիշ հրաշքի մըն ալ որ գար զիրենք ամրապնդելու իրենց հաւատքին մէջ։ Գուցէ յիշեցին անոնք իրենց Վարդապետին խօսքը որ ոչ շատ ժամանակ առաջ, դարձեալ վերնատան մէջ կ'ըսէր իրենց «Ոչ թողից զձեզ որբս, գամ առ ձեզ»։ «Իսկ Մխիթարիչն, Հոգին Սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ զամենայն զոր ինչ ասացի ձեզ» (Յովհ. ԺԴ. 26)։ Բնականաբար՝ պիտի վերադառնար և որբ պիտի չձգէր իր սիրեցեալ աշակերտները որոնք երեք տարիներ շարունակ լսած էին իր խօսքերը և որոնք հիմա դարձեալ պէտք ունէին իրեն, երթալու համար «մինչև ի ծագս աշխարհի», վասնզի, ինչպէս որ ըսած էր անոնց, մինչև յաւիտեան անոնց հետ պիտի ըլլար։ Առաքեալները, լեցուած Իրմով, պիտի քարոզէին Հօր, Որդւոյ և Հոգւոյն անունով. հրաշքներ ալ պիտի գործէին։ Ս. Հոգին կուգար ճիշդ այնտեղէն ուր մեկնած էր Ինք։ Պիտի գար Մխիթարիչ Ս. Հոգին առաքեալներուն վրայ, զանոնք լեցնելու պէս պէս շնորհներով և անոնք պիտի կարենային խօսիլ բոլոր լեզուները, քարոզելու համար նախ՝ մերձակայ երկիրներէն Երուսաղէմ ուխտի եկող ամբոխներուն և յետոյ, առաքելական գործով մեկնելու համար օտար երկիրներ։ Դարձեալ Գործք Առաքելոցի մէջ կը կարդանք թէ ինչպէս առաքեալները համարձակօրէն կը քարոզէին ընդհանրապէս Տաճարի շրջափակին մէջ և թէ իրենց շուրջ խռնուած ժողովուրդը կը զարմանար Գալիլիացի պարզ այս մարդոց գիտութեան։ «Սքանչանային ամենեքեան զարմացեալք և ասէին ցմիմեանս. զի՞նչ կամիցի այս լինել։ Եւ կէսքն ընդ խաղ արկեալ ասէին թէ քաղցուալից իցեն» (Գործք, Բ. 12–13)։

Վերնատան այս հրաշքը որ իբրև սաստիկ հով մը եկաւ և ցնցեց ամբողջ տունը, և կրակէ լեզուներով իջաւ, խորհրդանշան մըն էր Ս. Հոգիին զօրութեան մխիթարիչ ներկայութեան։ Առաքեալներուն համար արտաքին նշան մըն էր ներքնապէս ամրանալու և կառչելու իրենց հաւատքին։ Յիսուս իր մահուամբ և յարութեամբ անկեալ մարդը կը սրբէր իր սկզբնական մեղքէն, որդեգրելով զայն արքայութեան յաւիտենական փառքին։

Հոգեգալստեան հրաշքով Բաբելոնի լեզուներու խառնակութիւնը և անհասկացողութիւնը կը ներդաշնակուէր շնորհներու տուչութեամբ։ Ոչ միայն առաքեալներուն վրայ իջաւ Ս. Հոգին, այլ Եկեղեցւոյ հայրապետներուն, սուրբերուն ու մարտիրոսներուն, որոնք ճշմարտութեամբ և հոգիով երկրպագեցին Հօր Աստուծոյ համագոյակից և համապատիւ Ս. Հոգիին։ Ս. Հոգին բոլոր ժամանակներու մէջ ալ գործած է Ս. Եկեղեցիին մէջ որ մարմինն է Քրիստոսի, իբրև կենսատու աղբիւր մը, ճառագայթելով բոլոր հաւատացեալներու հոգիներուն մէջ, հոն կաթեցնելով քրիստոնէական առաքինութիւններու ամբողջութիւն մը, որոնցմով մարդիկ կրնան հասնիլ կատարելութեան և նմանիլ Աստուծոյ։

Մարդը իր առօրեայ կեանքով և մեղքերու տուրևառին մէջ կը կորսնցնէ իր անմեղութեան քաղցրութիւնը և կը դատապարտուի ներքին խռովքներու և մեղապարտ կեանքի մը։ Մեղքը այն ատեն կ'ըլլայ արգելք մը ձգուած ընդմէջ մարդուն և իր Արարիչ Աստուծոյ։ Ներքին պայքարներէ այլեւս պարտասած, պէտքը կը զգանք աստուածային յայտնութեան մը, որուն քաղցրութեան և սրբութեան մէջ սուզուած՝ կը սրբուինք խաթարիչ արգելքներէ և կը զգանք մեր էութեան վերընձիւղիլը նոր կեանքով մը և նոր սկիզբով մը։ Այս է անհաւատալի Ս. Հոգիին գործունէութիւնը Եկեղեցւոյ և մեր անհատական կեանքերուն մէջ երբ երջանիկ օր մը կը զգանք թէ դարձակէտ մը կ'ունենայ մեր կեանքը և ... վերստին կը ծնինք Ս. Հոգիով։ Առանց Ս. Հոգիով վերստին ծնունդի մը դատապարտուած կ'ըլլանք անկանգնելիօրէն թաւալու մեր մեղքերու ճախճախուտին մէջ անկարող լինելով սրբուելու և զարդարուելու

digitised by A.R.A.R.@

Անոր շնորհներովը։ Առանց Ս. Հոգիով գօտեւորուելու, հակառակ ենք միշտ մեր կարողութիւնները գործածելու չար նպատակներու, որովհետեւ գոյութիւն ունի նաեւ չար հոգի մը որ կ'առաջնորդէ մարդը յոռի նպատակներու, կ'այլայլէ եւ կ'եղծէ, զմեզ հեռացնելով Աստուծմէ։

Յիսուս խոստացած էր Իր աշակերտներուն ղրկել Մխիթարիչը։ Ըսած էր անոնց.— «Սպասեցէք Երուսաղէմ, պիտի ղրկեմ ձեզ Ս. Հոգին, Ան պիտի սորվեցնէ ամէն բան...»։ Եւ անհաւատալի արտաքին նշանով մը կ'իջնէր Ան, համակ իմաստութիւն, շնորհ, ուրախութիւն։ Ս. Հոգիին առաքեալներուն մէջ առատօրէն հեղման շնորհիւ էր որ անոնք կարող կ'ըլլային շարունակելու իրենց Տիրոջ գործը։ Ու Տէրը, նոյնինքն Աստուած, — վասնզի Ս. Հոգին իբրեւ մէկ Անձը Երրորդութեան, տարբեր անունով եւ կարողութիւնով նոյնն է բնութեամբ Հօր Աստուծոյ — մինչեւ յաւիտեան պիտի ըլլայ բոլոր անոնց հետ՝ որոնք կը հաւատան Իրեն, կը ջանան եւ կը նուիրեն Իր թագաւորութեան հաստատման համար այս աշխարհի մէջ սիրով եւ խաղաղութեամբ։

Միթէ չկա՞ն տակաւին մարդեր, գիտութեան եւ յառաջդիմութեան այս դարուն մէջ որոնք կասկածով եւ երկմտութեամբ դիտեն շնորհի եւ իմաստութեան Հոգին, եւ չփոթահար «քաղցուալից» կոչեն ճշմարիտ Աստուծոյ սիրոյն հրաւէրը։ Ծա՞ռ են անոնք եւ իրենց անփութութեան մէջ կարծրացած, նման Սերմնացանի առակի գետնին...։ Յատկանշական է Պետրոս Առաքեալի քարոզը խաժամուժ ամբոխին առջեւ երբ կ'ըսէ «Արք Իսրայելացիք, այս ձեզ յայտնի լիցի ...» եւ կը մէջբերէ Յովէլ մարգարէին յայտնութիւնը ... «Վերջին օրերուն Իմ Հոգիէս պիտի թափեմ ձեր բոլոր տղոց եւ աղջիկներուն վրայ, եւ ձեր տղաքներն ու աղջիկները պիտի մարգարէանան, ձեր երիտասարդները տեսիլներ պիտի ունենան, եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն...»։ Մարգարէին յայտնութենէն ութ հարիւր տարիներ ետք, անհաւատալի տեսիլք էր Երուսաղէմի ամառնային խաղաղ օդին մէջ. վերնատան վրայ, սաստիկ հովի մը եւ որոտումի մը մէջէն հանդիսաւորապէս կ'իջնէր Ս. Հոգին օծանելու առաքեալները։

Հրապարակներուն վրայ համարձակօրէն քարոզող մարդերը գինովներ չէին, ինչպէս ժողովուրդը կը կարծէր. օրուան «երրորդ ժամն էր» տակաւին ու չէին կրնար ամէնքը մէկանց գինովներ ըլլալ։ Ինչպիսի՜ լեզուներով, իմաստութեամբ, շնորհով, քաջութեամբ կը խօսէին անոնք, ունկնդիրներու հոգիները լեցնելով երանութեամբ, անոնց մաքերուն տալով քրիստոնէական առաքինութեանց եւ վսեմ ճշմարտութեանց խոյանքը։

Եթէ մարդը կենսաբանօրէն սնունդով կ'աճի եւ կը զարգանայ մարմնապէս, հոգիին սնունդը միւս կողմէ երկնատուր շնորհն է, աստուածային պարգեւը՝ որով կարող կ'ըլլան հաղորդակցիլ Արարիչ եւ արարած։ Երբ կը մերժենք մարմնական սնունդը կը դատապարտուինք մահուան։ Երբ կ'ուրանանք եւ կը մերժենք հոգեկան սնունդը դարձեալ դատապարտուած կ'ըլլանք ինքզինքնիս բարոյական մահուան, աստենական եւ հանդերձեալ կեանքին մէջ։

Տեսիլք էր եւ հրաշք վերնատան մէջ ամառնային խաղաղ օդով...։

Քրիստոնէութեան սկիզբէն ի վեր այդ տեսիլքն է որ լեցուցած է մեր աշխարհին հաւատացեալ ժողովուրդին սիրտը, բանալով անոր միտքը քրիստոնեայ իտէալին, Ս. Հոգիի շնորհին։ Տեսիլք մըն էր Ս. Հոգին եւ յարացոյց՝ ճշմարիտ կեանքի, մեր սուրբ Հայրապետներուն աչքերուն եւ միտքերուն առաջ։ Վասնզի Ս. Հոգին կենդանի է միշտ եւ կենդանացուցիչ, շարժուն է եւ շարժիչ։ Այդ տեսիլքին սեւեռուած ապրած ենք դարերով։ Ինչպիսի՜ Շնորհալիներու, Տաթեւացիներու, Նարեկացիներու ծնունդ տուած է ան։ Բոլոր անոնք հաւատարիմ մնացած են Տիրոջ խօսքին որ կ'ըսէ «Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ» (Յովհ. Զ. 64)։

Մեր ալ աղերսանքը թող ըլլայ շնորհաց Հոգիին մեր մէջ հեղումը, անով լեցուած՝ կարենալ ապրելու համար ճշմարիտ քրիստոնեայի կեանքով։ Մեր ալ աղօթքը թող ըլլայ մեր երանելի հայրապետներու նման,

«Արբո եւ մեզ ողորմութեամբ
ի բաժակէդ իմաստութեան»։

ԶԱՒԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ Զ.

digitised by A.R.A.R.@

## ԳԵՂՕՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՆ

Հրատոչոր ոսկորներէս սրինգ մը քեզի
Պիտի կտրեմ, եւ զայն յղկած պիտ' ըլլամ ես
Մինչեւ մահուանըս վերջին ժամը՝ տարփակէզ,
Որպէսզի միշտ իմ արիւնիս երգը հնչի,

Եւ դուն ըլլաս հողմնասարսուռ եւ մրմնջուն
Սօսիի պէս, եւ աղբիւրի նման բըխած,
Եւ շողը քեզ ադամանդի մը լուսամած
Ցոլացընէ խորը մտքի հայրիներուն:

Դուն կը խօսիս իբրեւ պատգամն աստուածներուն՝
Որ ատենօք Երկիրն Հայոց պահպանեցին,
Վարդանեղեղ եւ վըսեմ բոցն ես Աղօթքին.

Օշականի մէկ շիրմին վրայ թառած մեղուն՝
Որուն թեւերը ոսկեհուր դեռ կը պահեն
Մեղրը քաղուած սուրբի մը ջինջ շրթունքներէն...

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

●

## ՎԵՐՅԻՇՈՒՄ

Հին վայրեր, այս որքա՜ն քաղցրութիւն
Կը դարձնէք, դուք այսօր, ինծի ետ,
Ծառ, թուփ, շուք, խըրճիթ, հիւղ, արահետ,
Կ'ողջունէք զիս կանչով մ'անանուն:

Կը լըսեմ արձագանգն ալ ձայնին
Պարմանին որ կըքած է հիմա...
(Ով է որ ճակտի Գիրն իմանայ)
Կեանք, մոխիրն է այս քու խոստումին:

Հին օրեր, հին սէրեր ետ եկէք,
Դարձուցէք ինչ տարիք ձեզի հետ,
Մի թողուք զիս այսպէս սըրտաբեկ:

Ետ բերէք անցեալը արփաւէտ,
Որ նորէն *Պատրանքով* իր վըսեմ
Ես Կեանքի Պատմութեանը հիւսեմ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

## ՏՐՏՄՈՒԹԻՒՆ

Հալեցաւ յամեցող վերջին ձիւնն ալ հիմա,
Լեռներու մշուշոտ կատարէն հեռակայ:
Ծլեցաւ, ծաղկեցաւ նշենին մեր բակի,
Արտերուն մէջ կանաչ, սիրական մեղեդի:

Սթափած թմբիրէն իր՝ երկիրն է կարծես,
Կը գաղթեն ետ նորէն արագիլ ու ծիծառ,
Կարօտի անորոշ կը տանջէ կանչ մը քեզ.
Կը տաքնան մողէզներ արեւուն տաք պայծառ:

Ու հազար ձայնով հեւքն է նորէն գարունին.
Քարերէն ու հողէն կը բխի լոյս, ծիծաղ.
Հաւատալ չես կրնար թէ ձմեռ էր երէկ,
Փոթորիկ ու անձրեւ, ամայի, անկենդան:

Խնճոյքին մէջ այս մեծ բայց տրտում ես՝ որքա՜ն.
Իրարու դէմ փակուած աշխարհներ դուն ու ան...
Հոգիիդ մէջ անձայն կը ձիւնէ անդադար,
Ու գարունն այնտեղ ես՝ ալ երբեք չի դառնար:

ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ

## ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ՎԷՊ

Ինչ լաւ է զուլալ երկինքը լազուր,
Բացւել են ուրախ ճամբէքը գիւղի.
Հողի զաւակն է դէպի դաշտ վազում,
Կարօտ արեւի ...:

Լիայոյս, բարի սերմնացանը վեհ,
Յանձնում է առատ իր սերմը հողին,
Եւ աչքերն որպէս յոյսի զոյգ ջահեր՝
Յառած արեւին ...:

Այն ջահել, զգաստ սերմնացանին պէս,
Յոյզերս, ահ, քեզ յանձնել կ'ուզէի.
Սերմնացանի պէս միշտ հաւատալ քեզ՝
Ինչպէս նա հողին ...:

Վ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

# ԱՄՌԱՆ ԵՐԵԿՈԵՆ

Խաղաղութեամբ ընդհանուր, ահաւասիկ երեկոն
Կը տարածուի յամրաբար, գոյնի հազար խաղերով.
Յոյլ շարժումներն մարդերուն, քաղաքին մէջ հոս ու հոն
Ամրան տօթի կապանքէն ալ կ'արձակուին նազանքով:

×

Զի շարժիր ոչ մէկ տերեւ, մթնոլորտին մէջ միայն
Թանձր է հովը տաքէն. թանձրութեան մէջ այդ սակայն
Երազներու պատառներ քիչ մ'ամենուն կը կառչին
Բայց ամպերու պէս անզայտ, կը ծփան ու կ'անհետին:

×

Ամրան երկա՜ր երեկոն, կարաւան մ'է որ կ'անցնի
Բեռնաւորուած թանկարժէք արեւելեան իրերով,
Որոճալով անհատնում յիշատակները կեանքի
Մինչեւ հասնի հասակն իր զանգակներու ձայներով:

×

Կը մարմրին, կը մեռնին, լոյսերն ամէն շառագոյն
Մեղմ հովին հետ կը յառնեն, բոյրեր՝ ուրկէ չես գիտեր,
Եւ ծառերուն մութը բաց՝ խորհուրդներու պէս ծովուն
Տարերքի մեծ գաղտնիքէն յուշիկ, յուշիկ կը պատմեն:

×

Ունի ամրան երեկոն տարօրինակ հմայքներ.
Մանուկին պէս որ քնել կ'ուզէ լուսինն երկինքէն
Տղայ մ'այնտեղ խորասոյզ, կը մտածէ աներեր
Իր մեծ սիրոյն որ ա՜հ, միշտ, լուսինին պէս կուտայ խոյս...:

×

Խաղաղութեամբ ընդհանուր, կը տարածուի երեկոն
Գոյնի հազար խաղերով, մարդերու յոյլ շարժումով...:

ԶԱՒԷՆ Վ. Զ.

digitised by A.R.A.R.@

## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ՊԱՊ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Օտարականներու համար օթեւաններ եւ հիւանդանոցներ բարձրացան զանազան վայրերու մէջ։

Միջակութային ճակատի վրայ Կաթողիկոսի գործունէութեան կ'անդրադառնանք հետագային։

Վանքերու եւ մենաստաններու հաստատումը եւ կազմակերպութիւնը Ներսէսի ծրագրին ամենագլխաւոր ձեռնարկն էր։ Կրնանք ըսել Ներսէսն է անոնց հիմնադիրը Հայաստանի մէջ։

Չորրորդ դարու առաջին կէսին, քրիստոնէական աշխարհի մէջ, մանաւանդ Մերձաւոր Արեւելք, ամենամեծ նորութիւնն էր վանքերու կամ եղբայրանոցներու երեւան գալը։

Անկէ առաջ, քրիստոնէական վարդապետութեան ջերմ հաւատաւորներ, որոնք ճգնաւորական կամ միանձնական կեանք վարելով Աստուծոյ աւելի մօտեցած ըլլալ կը կարծէին, կը բաժնուէին իրենց ընտանիքէն, կը ձգէին գիւղ ու քաղաք, եւ կը փակէին անապատները, առանձնութեան մէջ խոկալու, աղօթելու, ճգնելու։

Այս շարժման առաջին վայրը պիտի ըլլար Եգիպտոսը։ Տաք ու չոր կլիման, Նեղոսի եզերքներուն գտնուող բազմաթիւ այրեր եւ քարանձաւներ, ինչպէս նաեւ առատ բուսականութիւն, հազարաւորներ պիտի հրապուրէր ճգնաւորական կեանքին։ Շարժումը հետզհետէ պիտի ծաւալէր Սուրիա, Միջագետք, Փոքր Ասիա եւ այն երկիրներ ուր քրիստոնեայ բազմութիւններ կը գտնուէին։

Անապատները լեցուն էին այս առանձնակեացներով, որոնցմէ ոմանք իրենց ճգնողական մարզանքներուն համար նորանոր մեթոտներ կ'որդեգրէին, եւ տարրական հանգիստէ իրենց անձերը զրկելու յամառ ճիգը կը նկատէին ապահովագոյն միջոցը իրենց հոգիներու փրկութեան։

Այս անապատականները, այս ճգնաւորները, առանձին առանձին ապրելով, թէեւ կը հաւատային իրենց երկիւղածական ոգորումները գոհացուցած ըլլալ, սակայն այսպիսի ապրելակերպի մը տեւական արդիւնաւէտ օգուտը իրենց անձին համար երազային էր, ընկերութեան համար՝ չգոյ, իսկ հրեշտակներու համար՝ թէական։

Հետզհետէ այս մենակեացներու հաւաքաբար ապրելու եւ աշխատելու գաղափարը կը զարգանար, որուն իրական ճարտարապետը կրնանք համարել Բարսեղ Կեսարացին, որ Ներսէսի համար ներշնչումի աղբիւր մը եղաւ։ Եղբայրանոցներ, վանքեր եւ մենաստաններ հաստատուեցան, ուր մտնողներ պիտի նուիրուէին խմբական աշխատանքի։ Բարսեղ այս հաստատութեանց համար կանոնադրութիւն մշակեց, որ հետագային հիմնական ծրագիրը պիտի կազմէր նման հաստատութիւններուն։ Սակաւակեաց կեանք, կազմակերպուած նուիրեալ աշխատանք, աղօթք, եւ անպայման հնազանդութիւն մեծաւորին կը կազմէին առանցքը եղբայրանոցներու եւ վանքերու գոյութեան։

Ներսէս ամենէն աւելի ուժ տուաւ վանքերու հաստատման եւ բազմանալուն Հայաստանի մէջ։ Ներսէսի առեն անապատականներ շատ կային հայ աշխարհի մէջ։ Անոնցմէ ոմանք, մանաւանդ Հայաստանի հարաւային գաւառներուն, քրիստոնէական հաւատքի տարածման ոգենաջան առաքեալները եղան։ Ասոնցմէ նշանաւոր հանդիսացան երկու օտարականներ, Եպիփան յոյնը եւ Շաղիտա ասորին(17)։ Իսկ հայ Գինդը, Տարօնէն, «որ հայոց աշխարհի բոլոր մարգիկ առհասարակ վարդապետ կը կոչէին»(18) ընդհանուր վերակացու եղած էր։

Ներսէսի կազմակերպական տաղանդը կարելի դարձուց կրօնական այս հաստատութիւններու յարատեւման եւ բարգաւաճումին։ Գիտցաւ ընտրել յարմարագոյն անձերը վարիչի եւ տեսուչի պաշտօններուն։

Փաւստոսի եւ Խորենացիի գիրքերուն մէջ հոս հոն ցրուած անուններ կը վկայեն թէ մեծ Կաթողիկոսի ըրածը հապճեպ եւ ժամանակաւոր տնօրինութիւններ չէին։ Ինքն իսկ կը շրջէր գաւառները շարունակ(19),

(17) Փաւստոս, Ե., 25, 26, 27։
(18) Փաւստոս, Զ., 16։
(19) Մեսրոպ Երէց, 41։

digitised by A.R.A.R.@

իր վերին հսկողութեան յարատեւ ազդեցութեամբ գործակալներու եռանդը վառ պահելու։ Դիւտ, Մուշէ, Եպիփան, Ծաղիտա, Եփրեմ, Փաւստոս, Զորթ, Խաղ, Տրդատ, կարծես հսկայական խաչակիր բանակի մը փորձուած և ձեռներէց զօրավարներն ըլլային, որոնք իրենց վերին հրամանատարին տիտանեան ծրագիրները գաղափարէն գործի կը փոխեն։

Կաթողիկոսարանի մէջ կազմած էր տասներկու եպիսկոպոսներէ բաղկացած Գերագոյն Խորհուրդ մը, արդիական առումով, ընկեր՝ նախարարական դահլիճ, որուն անդամներէն իւրաքանչիւրը այս կամ այն հաստատութեան պատասխանատու վարիչն էր։ Այսպէս, վերոյիշեալ անուններէն երկուքը, Փաւստոս և Զորթ Եպիսկոպոսները, Գերագոյն Խորհուրդի անդամներ էին, և միաժամանակ այս երկուքին յանձնուած էր Հայաստանի աղքատանոցներու տեսչութիւնը(20)։

Աշտիշատի ժողովը բնականաբար զբաղուած էր հեթանոսական կարգ մը յոռի բարքերու դէմ պայքարի հարցով։ Ընդունուած կանոններէն երկուքը միայն յիշուած է զոյգ պատմիչներէն։ Կ'երևի անոնք ամենէն աւելի տարածուածներն էին։

Կանոնով կ'արգիլուէր մեռելներու յուղարկաւորութեան առեն ցուցադրուած սուգի բարբարոս արտայայտութիւնները, որոնց ակնարկեցինք վերև։ Նոյնպէս, կ'արգիլուէր մերձաւորներու ամուսնութիւնը։ Մանաւանդ ունեւոր դասակարգի մէջ, որոնք հարստութիւնը պահպանելու մտատանջութենէն մղուած, կը սորոփէին ամուսնական կապէ մը, ուր վերջ ի վերջոյ օտար աղջիկ մը կամ տղայ մը բաժին պիտի անէր ընտանիքի հարստութենէն և կոտորակէր ոսկիի դէզը(21)։

Մեծամեծ ծրագիրներ, ինչպէս Ներսէսինը, սակայն, յոյսով, հաւատքով և խանդավառութեամբ հազիւ թէ կանգուն կրնային մնալ, եթէ նիւթական միջոցներ չգտնուէին՝ պահպանելու անոնց գոյութիւնը։

Եկեղեցիի հողային հարստութիւնը պատկառելի համեմատութիւններ առած էր։ Դեռ Լուսաւորչի օրերէն իսկ ոչ միայն հեթանոս մեհեաններու կալուածները ժառանգած էր, այլ Տրդատի արքայական առատաձեռնութիւնը իւրաքանչիւր ագարակ տեղի Եկեղեցիին կամ քահանայի տուած էր չորս չորս հող, իսկ աւաններուն՝ եօթ հող(22)։ Չենք գիտեր թէ այս հողերուն տարածութիւնը ի՞նչ էր, յամենայն դէպս այնքան մը մեծ, որ բաւարարութիւն տար Եկեղեցւոյ պաշտօնեաներու ապրուստին։

Տրդատէն վերջն ալ հողային պարգեներ տրուած ըլլալու էին Եկեղեցիին կամ եպիսկոպոսական վիճակներուն։ Զոր օրինակ, Տրդատի յաջորդ Խոսրով Բ. Թագաւորի օրով երկու նախարարութիւններ, Մանաւազեան և Որդունի, սերակոտոր եղան, և անոնց կալուածները տրուեցան Աղբիանոս Եպիսկոպոսին և Բասեն գաւառի եպիսկոպոսին՝ յօգուտ Եկեղեցւոյ(23)։

Ներսէս իր նորահաստատ վանքերուն համար եկամուտի նոր աղբիւր մ'ալ գտաւ, տնօրինելով որ վանքի սուրբ հողին մէջ թաղուելու բացառիկ պատուին արժանի կրնան ըլլալ թագաւորներ, իշխաններ և զօրավարներ, անշուշտ ի փոխարէն վանքին տալով հողային կամ դրամական նուէրներ(24)։ Ապա՝ մեռած իշխանի ժառանգորդներն ալ ապագային կը շարունակէին նպաստել վանքի բարօրութեան, ուր իրենց հօր աճիւնները կը հանգչէին։

Հայ աւագանիի մէջ մշտակայ վէճերու գլխաւոր աղբիւրներէն մին, մեծութեան աստիճանի կարգը, Ներսէս Կաթողիկոս, գոնէ առենուայ մը համար կը վերջացնէր՝ հաստատելով նոր կարգ մը(25)։ Ըսինք առենուայ մը համար։ Քանի որ նախարարական գահերու աստիճանը արդէն անցեալի մէջ որոշուած էր նախորդ թագաւորներէ, բայց այդ կարգը միշտ կ'աւրուէր, թէ լաւ և թէ վատ պատճառներով։ Ազգամիջեան վէճեր, նախանձ, մահ, ամուսնութիւն, արքայական գնահատանք կամ իրաւազըրկում, անոնց իւրաքանչիւրը բարդութիւններու ծնունդ կուտար, յաճախ անխափանելի, և ահա երէկուան կարգը այսօր

(20) Փաւստոս, Զ. 5։

(21) Խորենացի, Գ., 20։ Փաւստոս, Դ., 4։ Մեսրոպ Երէց, 42։

(22) Ագաթանգեղոս, Գլ. ձԹԲ. 837, էջ 423։

(23) Փաւստոս, Դ. 4։

(24) Մեսրոպ Երէց, 39։

(25) Մեսրոպ Երէց, 32։

digitised by A.R.A.R.@

խնդրական կ'ըլլար, և կռուի դուռ կը բանար։

Այս միևնոյն կնճռոտ տագնապը յաջորդ դարուն դարձեալ պիտի վրդովէր հայ կեանքը այն ատեն, որ Ներսէսի գաւակը, Սահակ Պարթև, Պարսիկ թագաւորի հետ միաբանաբար կը վերահաստատէր իշխանական գահակարգը։

Այսպէս, Ներսէս Կաթողիկոս հայ նոր մարդը կերտելու տիտանական և բազմակնճիռ աշխատանքով կ'ազնուացնէր և իր գործակիցներն ալ միևնոյն եռանդով կը վառէր։

Երկու պատմիչներն ալ երջանիկ են երբ կ'արձանագրեն Ներսէսի գործերը, և իրենց գոհունակութիւնը խանդացեալ տողով մը կ'արտայայտեն։ Ջերմեռանդ Փաւստոսի համար, կատարուած գործերը ուրիշ բան չէին բայց «Հայոց աշխարհի բոլոր ժողովուրդը դարձնել վանականներու ընդհանուր մէկ միաբանութիւն, բացի ամուսնութիւնէն»(26)։ Ատ բարձր գովեստ էր, որ երկիւղած քրիստոնեայ գրող մը, ինչպիսին Փաւստոս, կրնար արձանագրել։

Իսկ յունասէր Խորենացիի համար՝ յունասէր Ներսէսը արդէն հրաշքի մօտ բան մը կատարած էր. «Այնուհետև մեր աշխարհի մարդիկ երևցան արդէն ոչ բարբարոսներու պէս այլանդակուած, այլ քաղաքացիներու նման համեստացած»(27)։

## ԳԼՈՒԽ Դ.

# ԱՐՇԱԿՈՒՆԻ ԳԱՀԻ ԶՕՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

### 1. ՆՈՐ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Արտաքին քաղաքականութիւն!

Հայ թագաւորներու կատաղող մղձաւանջը, որուն թանձր ստուերին մէջ հայ արքունիքը, հայ պետական գործիչը, խարխափելով ճամբայ մը ընտրելու է, յուսալով որ սխալ ընտրութեամբ աղէտ մը չբերէ իր երկրին։

(26) Փաւստոս, Դ. 4։
(27) Խորենացի, Գ. 20։

Կրնաս ըսել թէ ամէն պետութեան համար առաւել կամ նուազ չափով կնճռոտ հարց է արտաքին քաղաքականութիւն մշակել։ Բայց Հայաստանի պարագային, մշտական ճգնաժամի մը սպառնալի բնոյթը ունէր այդ։

Ունենալ, որպէս դրացի, երկու հզօր տէրութիւններ, իրարու անհաշտ թշնամի։ Քու երկիրդ սեղմուած երկուքին միջև, և անոնցմէ իւրաքանչիւրը քեզմէ շատ աւելի զօրաւոր։ Սակայն դուն ալ այնքան մը ուժեղ, որ մէկուն կամ միւսին միանալդ՝ պայքարի նժարը որոշապէս հակեցնէ ընտրած կողմիդ։ Քու հողերդ շատ անգամ երկու թշնամի բանակներու ռազմադաշտ։ Չես կրնար ըսել անոնց թէ, դուք գացէք կռուեցէք, ես կը պահեմ բացարձակ չէզոքութիւն. երբ ձեր պատերազմը լմցնէք, ես ալ այդ ատեն կ'որոշեմ իմ բռնելիք դիրքը ձեր երկուքին հանդէպ։

Ո՛չ ալ, երբ երկուստեք ճնշումը սաստկացնեն, կրնաս երրորդ հզօր պետութեան մը դիմել, որովհետև երրորդ պետութիւն գոյութիւն չունի։ Այս պարագային քու աշխարհդ մի միայն երկու մեծազօր կայսրութիւն կը ճանչնայ, Պարսկաստանը և Հռոմը։

Իսկ Չորրորդ դարուն, երկու կայսրութիւններու յամառ և արիւնոտ մրցակցութիւնը հասաւ իր գագաթնակէտին, այն ատենէն որ երկու միապետներ, իրարու հետ վարած բանակցութիւններու և յղած թղթակցութիւններու մէջ, բացէն ի բաց մէկը միւսէն քու երկիրդ կը պահանջէ։ Շատ ալ հոգ չընելով թէ դուն ինչ ըսելիք ունիս։

Արշակ և Պապ թագաւորներու օրով, այս սարսափելի պայքարը իր ամէնէն փոթորկոտ օրերը կ'ապրի։ Այլևս երկիրը դարձեր է կռուախնձոր, թագաւոր, կաթողիկոս, նախարար բաժնուած են ահաւոր ցանցի մը մանուածապատ չուաններու հեղձուցիչ հանգոյցներուն մէջ։ Արեան գետեր գետերուն ջրերը պիտի ներկէին։ Արդէն՝ Պապի մահէն վերջ, հազիւ տաս տարի անցած, երկու կողմերն ալ, յոգնած և չուառած, արիւնլուայ կռուախնձորը պիտի կարեն և բաժնեն իրենց մէջ։ Ողբերգական Լեհաստան մը Չորրորդ դարու մէջ, այն տարբերութեամբ որ Լեհաստանը յօշոտող-

ները երեք հատ են, Աւստրիա, Ռուսիա, Բրուսիա։

Արշակ թագաւոր, ուշ կամ կանուխ, պէտք է ճշդէր իր դիրքը երկու ռազմական դրացիներու հանդէպ։ Տասներկու տարիէ ի վեր (338–350) իր վարած քաղաքականութիւնը պարսկական հակում ունէր։ Պարագաներու ստիպումը հարկադրած էր զինք և արքունիքի մեծամասնութիւնը, մինչև այդ կիրարկուած Բիւզանդական քաղաքականութենէն հրաժարիլ, և Շապուհ թագաւորը, որ Արշակին Հայաստանի գահուն տիրանալուն օժանդակած էր, ազոքող գործելակերպ մը որդեգրել։ Մանաւանդ որ պատանի Արշակը Հայաստան զրկելէն վերջ, Շապուհ անմիջապէս սկսած էր պատերազմական գործողութիւններու Բիւզանդիոնի դէմ։

Արշակ շատ ալ երջանիկ չէր այս բռնադատեալ կացութենէն։ Ինք և իր խորհրդականները իրենց աչքի առաջ ունէին վերջին վաթսուն տարիներու ընթացքին հայ թագաւորներու օրինակը։

Արշակի հայրը, կուրացած Տիրան, նախկին թագաւորը, առանձնացած կ'ապրէր Կուաշ աւանը, Արագածի ստորոտին(1)։

Տիրան գահ բարձրացած էր Կոստանդին կայսեր օգնութեամբ։ Տիրանի հայրը, Խոսրով Կոտակ, թագաւոր եղաւ Կոստանդինի զրկած բանակի ազդու միջամտութեամբ։ Խոսրովի հայրը Տրդատ, Հայաստանի թագին տիրացաւ Դիոկղետիանոս կայսեր յաղթական լէգէոններու սուրերուն կռթնած։ Յետոյ ալ Տրդատ և Կոստանդին կայսր դաշինք կնքեցին։ Պատմութեան մէջ առաջին դաշինքը երկու Քրիստոնեայ վեհապետներու։

Ինչպէս կը տեսնենք, Արշակ առաջինն էր որ Պարսիկ թագաւորի օգնութեամբ կը ստանար թագը։

Տրդատէն ի վեր, Հայաստանի պետական կեանքին մէջ Բիւզանդական կուսակցութիւնը հետզհետէ զօրացած էր, և բաղդատմամբ հայ Պարսկական կուսակցութեան կը ներկայացնէր պատկառելի մեծամասնութիւն։

Բիւզանդական խումբի գերակշռութեան մեծագոյն ազդակ մ'ալ էր հայ կաթողիկոսութիւնը։ Կարելի չէր անտեսել Լուսաւորչեան ընտանիքի անդամները, իրենց այնքան չեշտուած յունասիրութեամբ։ Բիւզանդական կուսակցութեան տեսակէտներէն տարբեր նկատումներ ունենալն հայ պետական գործունէութեան վերաբերմամբ, Ներսէս Կաթողիկոսի պարագային բոլորովին անկարելի։ Մինչ հնարաւո՞ր էր քրիստոնեայ հայրապետին համար նոյնիսկ սառն կողմնակցութիւն ցոյց տալ կրակապաշտ Շապուհին, որ մոլեռանդ Մազդէզական էր, կը հալածէր քրիստոնեաները, և Պարսկաստանի քրիստոնէից պետը, Սիմէոն Եպիսկոպոս, իր քահանաներով միասին մահուան դատապարտուած էր, ու ապա ալ հրամայած ընդհանուր ջարդ քրիստոնեաներու(2)։

Պարսկական կուսակցութիւնը, թէև փոքրամասնութիւն, սակայն անհանդարտ և գործօն ուժ մ'էր, և առիթը չէր փախցներ, որևէ պատրուակ ներկայանալուն, պայքարի մտնելու իր հակառակորդներուն դէմ։ Եւ որովհետև երկու կողմերն ալ միևնոյն ազգի զաւակներն էին, իրենց կռիւը կ'ըլլար կատաղի և անգութ։

Արշակի առաջին տարիներուն, Պարսկական կուսակցութեան նախարարները զգուշութեան պատճառ մը չունէին։ Շապուհ արդէն պատերազմի բռնուած էր Բիւզանդիոնի հետ։ Արշակ թագաւորն ալ, ըլլայ հարկադրաբար, ըլլայ կամովին, հայ բանակէն օգնական ուժեր տրամադրած էր Շապուհին(3)։

Յետոյ, Հայաստանի արևելեան զօրքերուն հրամանատարութիւնը Վահան Ամատունիէն առնելով, Պարսկական կուսակցութեան անդամ Վաղինակ Սիւնիին յանձնըւեր էր, անշուշտ Շապուհի պահանջով։

Նոյնիսկ Մամիկոնեան ընտանիքը կը ներկայացնէր տարօրինակ երևոյթ։ Ահա երեք եղբայրներ. Վարդան, տոհմին նահապետը, Վասակ Սպարապետ, և Վահան։

Նըրու-Նաջէրզի (9) ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԷՆ

(1) Խորենացի, Գ. 22։

(2) Փաւստոս, Գ. 17։

(3) Փաւստոս, Գ. 20։

digitised by A.R.A.R.@

## ԿՐՕՆԱ-ԴԱՍՏԻԱԿԱՆ

# ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑԸ

4. Թուղթին վարդապետութիւնը. — Եթէ Ղուկաս Աւետարանը ցոյց կու տայ Յիսուս Քրիստոսի գործերը և առաքելութեան նպատակը «Զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել», Գործք Առաքելոցը կը նկարագրէ թէ Յիսուս Քրիստոս ինչ ըրաւ իր նորահաստատ Եկեղեցիին շարունակութեան և ծաւալման համար։

Տէրը իր համբարձումէն վերջ, համաձայն իր խոստման, «մխիթարիչը», Ս. Հոգին ղրկեց իր Առաքեալներուն, որոնք «ի վերուստ» ստացան Ս. Հոգիին բազմազան պարգևները և սկսան գործունէութեան։ Ճշմարիտ է որ Գործք Առաքելոցին գրեթէ կէսը լեցուն է «Եկեղեցիին կատարած գործերով», որուն մէջ մեծ դեր կը խաղան Ս. Պետրոս և Ս. Պօղոս Առաքեալները։ Երկուքին ալ գործունէութեան մէջ անտեսանելի սակայն միշտ ներկայ դէմքը կայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսին, որ կ'առաջնորդէ իր հիմնած Եկեղեցին Ս. Հոգիին զօրութեամբ։

Գործք Առաքելոցը հիմնական նպատակ մը կը հետապնդէ և ցոյց կու տայ, իրական պատկերը նորահաստատ քրիստոնէութեան, Երուսաղէմէն նախ Սամարիա, ապա Փոքր Ասիա, Յունաստան, Մակեդոնիա, Հռոմ և այլուր, ուր որ կարելի եղաւ քրիստոնէութիւնը քարոզել և աւետարանել։ Գործք Առաքելոցին նպատակը միայն ու միայն հրաշագան և ցնցող դէպքերը արձանագրել չէ եղած, այլ՝ ցոյց տալ անոնց ներքև պահուած ճշմարտութիւնները։ Նոյն շրջանին տեղի կ'ունենան հրաշքներ, որոնց մէջ Ս. Հոգին առաջնորդ կը հանդիսանայ ամենուրեք։

Թէ Ղուկաս Աւետարանը և թէ Գործք Առաքելոցը զարգացեալ ընկերութեան մը համար գրուած են։ Ղուկաս Աւետարանիչ իր երկու գիրքերուն մէջ ցոյց կու տայ թէ Քրիստոսի մահուան պատճառ եղաւ Հրեայ ազգը։ Երբ Ս. Պօղոս Առաքեալ իբրև խռովարար ամբաստանուեցաւ Հրէից կողմէն, Ագրիպպաս արքան և Փեստոս դատաւորը նպաստաւոր վկայութիւններ տուին իր մասին թէ ոչ ինչ արժանի մահու կամ կապանաց գործէ այրս այս (ԻԶ. 31)։ Նախնի քրիստոնեաները ըմբոստ, խռովարար և մոլի անձեր չէին, այլ իշխանութեան հանդէպ կարգապահ, խաղաղասէր և օրինապահ անձեր էին ամենուրեք։

Գործք Առաքելոցը իր խորքին մէջ քրիստոնէական կրօնքը կը ջատագովէ, ցոյց տալով անոր աստուածային արժէքը. այդ կրօնքին անդամ կրնան ըլլալ ամէն անոնք որոնք կը զղջան և կ'ապաշխարեն։

5. Թուղթին արժէքը. — Գործք Առաքելոցը մէկէ աւելի արժէքներ կը ներկայացնէ. ան ցոյց կու տայ նախնական Եկեղեցւոյ, նոր կրօնքին ունեցած վարչական գործերուն պարզութիւնը։ Որևէ գործի մը կարգադրութեան համար կը կանչուէին բոլոր եղբայրները (Զ. 2)։ Այն տեղերը ուր անոնք կը հաւաքուէին և կ'աղօթէին, հոն խորքին մէջ պաշտամունքի և արարողութեան պարզութիւն կար։ Բոլոր եղբայրները կը հաւաքուէին, հոն որոշումներ կը տրուէին և կը հաղորդուէին յանուն բոլոր առաքելոց, երիցանց և եղբարց (ԺԵ. 22)։

Ուրիշ կարևոր պարագայ մը կայ, որ արժանի է ուշադրութեան։ Գոյութիւն ունեցող «միջնորմը» կամ պատը Հրէից և հեթանոսաց միջև վերջ գտաւ, բոլոր ազգերը բերուեցան ի մի քրիստոնէական եղբայրութեան։ Ըստ Տիրոջ պատգամին «Գնացէք այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» (Մատթ. ԻԸ. 19)։ Նախապէս Ս. Աւետարանը Հրէից միայն քարոզուեցաւ, ապա՝ Սամարացւոց և հուսկ ուրեմն բոլոր հեթանոս ազգերուն։ Հրեաները իրենց հայրենի աւանդութեանց և հնամենի սովորութեանց ու օրինաց հանդէպ նախանձախնդիր ըլլալով, հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն դարձող նորահաւատներէն անոնց ամբողջական գործադրութիւնը կը պահանջէին. այս պատճառաւ դժգոհութիւններ յառաջ կու գային, զորօրինակ թըլփատութիւնը և ուրիշ հնամենի օրէնքներու անխախտ կատարման պարագան։

Սակայն իրենց այս պնդումը, քրիստոնէական կրօնքին և ոգիին հակառակ ըլ-

digitised by A.R.A.R.@

լալով տակաւ առ տակաւ զանց եղաւ։ Հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն դարձող նորահաւատները մասին Երուսաղէմի մէջ մասնաւոր ժողով մը գումարուեցաւ, ուր անոնք ազատուեցան հրէական օրէնքներու կապանքներէն (ԺԵ.)։ Հրեայ ազգը ճշմարիտ Մեսիան մերժելով Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը ըլլալու հանգամանքը կորսնցուցած էր։ Հին Իսրայէլը Նոր Իսրայէլի փոխակերպուած էր, որուն մէջ փոխանակ հրեայ ազգը միայն ըլլալու, բովանդակ քրիստոնեայ ազգերը և ժողովուրդները տեղ գրաւած էին։ Քրիստոնէական Եկեղեցին իր խորքին մէջ Մի, Առաքելական և Սուրբ Եկեղեցի մըն է, ուր ցեղերու միջև ամէն խտրութիւն ի սպառ կը ջնջուին։

Ս. Աւետարանը մարդոց գերագոյն Օրէնքը եղած էր, Յիսուս Քրիստոս՝ Եկեղեցւոյ գերագոյն հիմնադիրը. իսկ Ս. Խաչը՝ որուն վրայ Ան բարձրացաւ և իր սուրբ և մեղաւորքաւիչ արիւնը թափեց մարդկային ազգի փրկութեան համար՝ եղաւ անոր դրօշակը։ Գործք Առաքելոցը քրիստոնէական հաւատքը և անոր դաւանանքը կը ներկայացնէ ճշմարիտ և լուսաւոր կրօնք մը, որուն մէջ բոլոր մարդիկ կրնան մտնել հաւատքով և ճշմարտութեամբ։ Քրիստոնէութիւնը հակառակ չէր Հռոմէական կայսրութեան և ոչ ալ քաղաքակրթութեան. ան համամարդկային և տիեզերական կրօնքն է բովանդակ աշխարհի։

6. Թուղթին աղբիւրները. — Գործք Առաքելոցին արուեստագէտ հեղինակը, իր գործին պատրաստութեան ժամանակ աչքի առջև ունեցած է բազմաթիւ աղբիւրներ, քրիստոնէական ջատագովութիւններ, անգիր և գրաւոր աւանդութիւններ, վաւերաթուղթեր և մանաւանդ Բ. Մասին կազմութեան առթիւ ճանապարհորդական ժամանակագրութիւններ։ Ան իր Աւետարանին մէջ կը յայտնէ թէ իրեն համար պէտք եղած տրամադրելի և օգտակար աղբիւրները գործածած և օգտուած է անոնցմէ (Ղուկ. Ա. 1)։ Արդ, իր Աւետարանին խմբագրութեան առթիւ, ան իր առջև ունեցած է Մարկոսի Աւետարանը, որ երեք համաբարբառ Աւետարաններէն կանխագոյնը կը նկատուի։ Ուշադիր ընթերցում մը երկու Աւետարաններուն ցոյց կուտայ թէ Ղուկաս մեծ մասամբ կախում ունի Մարկոսի Աւետարանէն։ Ան յաճախ վերստին կը գրէ անոր խօսքերը, սակայն աւելի արուեստական ոճով և առանց փոխելու Մարկոսի ընդհանուր իմաստները, այլ անոնց տալով գրական շնորհ և արուեստական շունչ և ոգի։ Նոյն ազդեցութիւն ունի նաև Գործք Առաքելոցի մէջ, սակայն հոն կայ աղբիւրներու այլազանութիւն մը և ջատագովական գրութիւններ։ Խիստ քննութիւն մը և մանրակրկիտ ուսումնասիրութիւն մը կատարելով հանդերձ, շատ դժուար պարագայ մը կը կազմէ Ղուկասու Աւետարանին և Գործք Առաքելոցին բուն աղբիւրը հետազօտել և գտնել։ Ան՝ իբրև արուեստագէտ, իր առջև ունեցած բոլոր աղբիւրներէն օգտուելու շնորհք մը ցոյց կուտայ։ Ան կը գրէ միայն ինչ որ անհրաժեշտ է, գրուածքին տալով ստեղծագործական ոգի։ Գործք Առաքելոցի «Մեք հատուածքներէն» սկսեալ մինչև իր գործին աւարտը, ան իր կողմէն պատմուած դէպքերու և եղելութեանց ականատես և ականջալուր ըլլալու հանգամանքը կը ներկայացնէ մեծ մասամբ։ Հոն ուր ան բացակայ է, իր տեղեկութիւնները Ս. Պօղոս Առաքեալէն կամ անոր ընկերակից անձերէն կը քաղէ և կը գրէ, որոնց անունները կը յիշատակէ։ Ան իր պատմած դէպքերուն ժամանակագրութիւնը կը պահէ։ Իսկ գալով Գործք Առաքելոցի առաջին մասի դէպքերուն, բաւական դժուար է անոնց մասին ճշգիւ գրել։ Հոն ժամանակագրական դէպքերը մթին են։ Փիլիպպոս Առաքեալ Ղուկասի գլխաւոր տեղեկատու անձերէն մին կը ներկայանայ։ Ղուկաս Աւետարանիչ Կեսարիա (Պաղեստինեան) քաղաքին մէջ երկար տարիներ ապրած ըլլալով, հաւանական է որ կարգ մը անուանի և նշանաւոր նորահաւատ անձերու հետ անձնական կապ և բարեկամական շփում ունեցած ըլլայ և հանդիպած ըլլայ նաև Ս. Պետրոս և Ս. Յակոբոս Առաքեալներուն, ինչպէս նաև Ս. Պօղոսի, որմէ առած պէտք է ըլլայ Ս. Ստեփանոսի նահատակութեան դէպքերը և Եկեղեցւոյ իրադարձութիւնները։

Ղուկաս Աւետարանիչ սերտ աղերս և առնչութիւն ունի նաև Յովհաննէս-Մարկոսի հետ, որուն մօրը տունը նախնի քրիստոնեաներու աղօթավայր մը եղած էր։ Պետրոս Առաքեալի հրաշքով բանտէն ազատուիլը որ հոն կը պատմուի արդարև կեն-

digitised by A.R.A.R.@

գանի պատկեր մը կը ներկայացնէ։ Ղուկաս օգտուած է նաև Երուսաղէմական և կեսարիական աղբիւրներէն։

Պենտեկոստէի պատմուածքին մէջ, Ղուկաս երկու ուրոյն պատմուածքներ ունի, երբ Ս. Հոգին Առաքեալներուն վրայ իջաւ, որոնք Սիոնի վերնատան մէջ հաւաքուած կ'աղօթէին «Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով, և սկսան խօսել յայլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել նոցա» (Բ. 4)։ Իսկ միւս պատմուածքին համաձայն «Սքանչանային ամենեքեան զարմացեալք և ասէին ցմիմեանս. զի՞նչ կամիցի այս լինել։ Եւ կիսոյն ընդ խաղ արկեալ ասէին, եթէ քաղցուալից իցեն» (Բ. 12-3)։ Ինչ որ ալ եղած ըլլան երկու ուրոյն պատմուածքներուն տարբերութիւնները, Քրիստոնէական Եկեղեցին հիմնուեցաւ Պենտեկոստէին օրը, երբ Առաքեալները Ս. Հոգւոյն բազմապատիկ շնորհքները ստացան քարոզելու քրիստոնէական կրօնքը։

7. Թուղթին թուականը. — Գործք Առաքելոցի գրութեան թուականին համար կան երեք հաւանական թուականներ։ Կարգ մը Ս. Գրոց քննադատներ և մեկնաբաններ անոր գրութիւնը կը դնեն 64 թուականին։ Ինչպէս յայտնի է, Գործք Առաքելոցը կը վերջանայ Ս. Պօղոսի Հռոմ եղած ժամանակը, երբ ան դեռ նահատակուած չէր. «Եւ եկաց զերկեամ մի բովանդակ իբրով վարձու. և ընդունէր զամենեսեան որ մտանէին առ նա. քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ, և ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի անխափան՝ ամենայն համարձակութեամբ» (ԻԸ. 30-32)։ Ս. Պօղոս դեռ Կայսեր ներկայացած չէր դատուելու համար։ Սակայն պէտք է ընդունիլ թէ Ղուկասու Աւետարանին գլխաւոր աղբիւրներէն մին ներկայացող Մարկոսի Աւետարանը 65 թուականէն առաջ գրուած չի կրնար ըլլալ։ Ոմանք կը կարծեն թէ Ղուկաս իր առջև ունեցած է Յովսեփոսի «Հնախօսութիւնք Հրէից» գործը, որ 93 թուականին խմբագրուած պէտք է եղած ըլլայ։

Երկրորդ հաւանական թուական կարելի է նկատել 75 թուականը։ Ղուկաս կը ձգէ Պօղոս Առաքեալը, ինչպէս Գործք Առաքելոցի առաջին մասին մէջ ձգած էր Պետրոս Առաքեալը և կը ջատագովէ քրիստոնէութեան տարածումը։ Ամէն անոնք՝ որոնք կը կարծեն թէ Ղուկաս Գործք Առաքելոցի խմբագրութեան ժամանակ իր առջև ունեցած է Յովսեփոսի վերոյիշեալ գործը, 90-95ի միջև կը դնեն գրութեան թուականը։ Գործք Առաքելոցը ցոյց կուտայ բարեկամական և սրտակից լայն գործակցութիւնը Հռոմէական Կայսրութեան կարգ մը պաշտօնակալներու, Եկեղեցւոյ և անոր պաշտօնէից հանդէպ։ Վերջին կարծիքը աւելի հաւանական կը թուի ըլլալ իբրև Գործք Առաքելոցի խմբագրութեան թուական։

Պէտք է ի մտի ունենալ թէ Ղուկաս Ս. Պետրոս Առաքեալի գործունէութեան աւելի կարեւորութիւն կ'ընծայէ և կերպով մը ստուերի մէջ կը ձգէ Ս. Պօղոս Առաքեալի գործն ու նուիրումի ոգին։ Ինչ որ ալ եղած ըլլայ երկու գործակից առաքեալներուն գործունէութեան դաշտը և յաջողութիւնները հեթանոս աշխարհի մէջ, Ս. Պօղոս, որ երկու տարիներ մնաց և աշխատեցաւ քարոզելու և տարածելու քրիստոնէութիւնը Կայսրութեան մայրաքաղաքին մէջ, անժխտելիօրէն մեծ դեր մը կատարած է իբրև ախոյեան Ս. Եկեղեցւոյ և աւետարանիչ քրիստոնէական լոյս հաւատքին և անոր դաւանութեանց։ Ան եղաւ Հռոմի Եկեղեցւոյն առաջին առաքեալը. հոն ան հիմնեց ու կազմակերպեց առաջին Եկեղեցի մը։ Պատմական տեսակէտով, տուեալներով և քննադատութիւններով կարելի չէ հաստատել Պետրոս Առաքեալի Հռոմի Եկեղեցիին հիմնադիր եղած ըլլալը։

Աւանդութեան համաձայն, Ս. Պօղոս Հռոմի մէջ նահատակուեցաւ 62 թուականին։ Թէ ինչո՞ւ Գործք Առաքելոցին հեղինակը չէ ուզած անոր նահատակութիւնը յիշել, կը մնայ մութ և առեղծուածային։

(Վերջ) ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

# (ԽԵՒ) ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

= 17 =

## ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ.— 2

Ա.

*Հիմիկ ճարտար բժիշկ ես դու, որ մընացիր քան զմազ բարակ,*
*Ամէն մարդոյ մարմինն է խոց, բայց քո հոգիդ է խոց ւ առակ:*

Բ.

*Զքեզ ուխարաց հովիւ ճառես, ասես չըկայ ինձ նըմանակ,*
*Երբ քան զուխարն ես շատ անմիտ, չէր պարծենաս է չար մըշակ:*

Գ.

*Իսկի լինի հանց խրատատու, որ խըրատէ զաշխարհս յերակ,*
*Ինքն ի յամէն խրատէ ի դուրս, ամէն մարդոյ խաղք ու կատակ:*

Դ.

*Որ ասես մի ըսպանանէր, մի գողանար եւ մի շընար,*
*Եւ ըսպաննես, շընաս, գըկես, եւ մընացեր չարեաց զաւակ:*

Ե.

*Դու այն կոյր առաջնորդն ես, մարդկան կապես բեռն ու շալակ,*
*Դու մատամբդ ի հետ չաւգնես, բայց թէ խաբող ես ւ անառակ:*

Զ.

*Զամենայն մարդ խրատես, քո հոգոյդ չէր ես փաթերակ,*
*Զանայ ու գործէ բարի, ու չարին կացիր հակառակ:*

Է.

*Ծերացար ու չմոռացար, միթէ մնաց քեզ ժամանակ,*
*Որ զատեննիս դու սիրեցիր, զանղէն թողեր ես ըըրիշակ:*

Ը.

*Փորեցիր քեզ գուբ խոր, որ կեռայ որդն ի յատակ,*
*Վառեցեր հանց հուր ու բոց, որ չունենաս իսկի ճարակ:*

Թ.

*Մարմին արա չար[ե]աց հերիք, մի կալ բարոյն այլ հակառակ,*
*Աստուած գըթած եւ ողորմած, թէ արտասուաց հեղես վըտակ:*

Ժ.

*Գիտեմ զի յոյժ ես մեղաւոր, հանց որ չունիս քեզ աւրինակ,*
*Ի ճգնութիւն ըզքեզ մաշէ, կամ լեր մարմնովդ նահատակ:*

Բնագիր, Դ. էջ 134,

ԺԱ.

*Միթէ մեղօք հիւանդացար, զապաշխարելն առ քեզ ճարակ,*
*Փորձեցեր զմեղքն ու տեսեր, այլ մի կոխեր այնպէս կըրակ։*

ԺԲ.

*Մի պարծենար եւս Յովանէս Թլկուրանցի, լեզուովդ արագ,*
*Յաղտեղեցիր զհոգիդ մեղաւք, մնացիր խաւար քան զսեւ ճըրագ։*

= 18 =

## ԲԱՆ ԽՐԱՏԱԿԱՆ. — Յ

Ա.

*Անձն իմ ընդէր եղեր շընոց, ձայնըդ կու գայ ամէն փողոց,*
*Յորժամ լըցար անչափ չարեաւք, ժառանգ լինիս չար դըժոխոց։*

Բ.

*Զինչ շահ եղեւ քեզ կամ աւգուտ, որ հեռացար ի սուրբ գործոց,*
*Յաստէնս զանունըդ պղծեցիր, անդէն վառես քեզ հուր ու բոց։*

Գ.

*Այլ մի մընար արքայութեան, քեզ կու մընան անդունդք խորոց,*
*Ուր կայ խաւար եւ տարտարոս, անքուն որդունք եւ հուր հընոց։*

Դ.

*Վաղ գիտէի անձն իմ ըզքեզ, որ զըլխիվայր էիր գալոց,*
*Յորժամ զինոյ եղեր սիրող, երբ որ ուսար շատ մի հաչոց։*

Ե.

*Զի խրատատու եղեր բազմաց, եւ ուսուցիչ ի սուրբ գըրոց,*
*Երբոր ի ծայր չելեր բարոյն, ամէն գընաց ի հետ ջըրոց։*

Զ.

*Ես այլ ումեք չեմ մեղադրեր, դու ես արեր զիս զան եւ խոց,*
*Թէպէտ կորեար զանգիւտ կորուստն, պատճառ լինիս մեղաց շատոց։*

Է.

*Զինչ շինեցիր ի փուլ տարար, կըրկին այլ չես նոր շինելոց,*
*Եղուկ եւ վայ է ինձ գերոյս, աւայ թէ ինչ եմ լինելոց։*

---

Բնագիր, Դ. էջ 136։ Տես Սիոն, 1952, էջ 123։ Հմմտ. Կիւլ. = Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939, էջ 117, Ս. Ց. մէկ ձեռագրէն, թկ. 1786։

Բ. — 1. — ի Սուրբ գրոց, Կիւլ.։
Ե. — 1. — խրատու, Դ։
Է. — 1. — Զի՞նչ շինեցիր ի փուշ օտար, Կիւլ.։ Նոր, չունի Դ։

digitised by A.R.A.R.@

## ԵԿԵՂԵՑԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

# ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ՀԱՒԱՏՔԸ

## ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Բազմավէպի 1955 Ապրիլ–Մայիսի միացեալ թիւին մէջ, էջ 93–99, Հ. Ներսէս Տէր Ներսէսեան դարձեալ փաստագուրկ յօդուած մը ունի Տիրամօր Անարատ Յղութեան մասին, ուր կան սակայն մէկ երկու կէտեր, որոնց պարտք կը սեպենք անդրադառնալ համառօտակի։

Գեր. յօդուածագիրը կը հարցնէ. «Ի՞նչ պիտի ըսէ Ն. Եպս. Ծովական ... եթէ հիմա յիշատակենք Շնորհալիէն վկայութիւն մը, ուր Տիրամայրը մաքուր կը կոչուի նախ քան Ս. Հոգիին եկաւորութիւնը» (էջ 94)։

Եւ կը ներկայացնէ սա տողերը.

«Բարբառ աւետեաց ձայնիւ
Գաբրիէլ գոչէր սրբուհւոյն.
Ահա քեզ առաքիմ, մաքուր,
Պատրաստել տեղի աներեւութին»։

Ապա կ'աւելցնէ նոր հարցում մը. «Ո՞ր

Ը.

Ի ծնրութեանդ գլորեցար, յորժամ զմեղքդ էիր քաւելոց,
Կարիք չունի թէ դարձ ունիր, վախեմ թէ ճանց ես մընալոց:

Թ.

Իմաստութիւն առանց զերկիւղ ըզՍողոմոն յանդունդս իջոյց,
Թէպէտ յաստէնս էր փառաւոր, յանդէն եղեւ փոքր եւ զըծուծ:

Ժ.

Մարմին արա չարեաց հերիք, յաստէս յանդէն ենք փոխելոց
Զինչ գէշ ու լաւ որ գործեցինք, մեզ առաջի են դընելոց:

ԺԱ.

Լաց և արտասուէ զաւրհանապազ, աղաչէ զՏէրն արարածոց,
Աստուած գըթած եւ ողորմած, քաւիչ մեղաց մեղուցելոց:

ԺԲ.

Նա զամենայն որ խընամէ, կանկնէ զանկեալն ի գլորելոց,
Ինքն է բարեաց պարգեւատու, դարձ եւ դարան մոլորելոց:

ԺԳ.

Եւ Ցովանէս լըցեալ մեղօք, թէ աւելոց ես լսելոց,
Երթ ի լերինըն բընակեաց, կամ հետեւիր զհետ սըրբոց:

(6)

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

Ը. — 1. — էիր — ես, կիւլ.։
Թ. — 2. — ... աղէն ս՛էր զօրաւոր, ընդէն ... կիւլ.։
Ժ. — 2. — ... որ գծեցեր, մեր ... կիւլ.։
ԺԱ. — 1. — ... աղաչէ ըղկոյսն, սուրբըն սըրբոց, — 2 — Որ բարեխօսէ իր Միածնին, որ ողորմի մեղաց մերոց, կիւլ.։
ԺԲ. — 1. — Ապա զամէն ոք ... — 2 — Ինքն է բուրուց ... կիւլ.։
ԺԳ. — 2. — ... բընակէ, ... զուն Սուրբ Գրոց, կիւլ.։

digitised by A.R.A.R.@

է Ն. Եպս. Ծովականի քննական անկողմնակալութիւնը, տարրկայականութիւնը»։

Սիոնի մէջ, 1954, էջ 202, բացորոշ և վճռական վկայութիւններով ներկայացուցած էինք Ս. Ներսէս Շնորհալիի իմացումը Ս. Կոյսի մաքրագործման մասին, և հարկ չէինք զգացած այնքան պարզ և յստակ տողեր վերստին բացատրելու։ Ի հաստատութիւն մեր ըսածին հոս կը դնենք մէկը այդ վկայութիւններէն.

«Էջ ահեղօքն հրեշտակին,
Բնակիլ յարգանդ սրբոյ Կուսին.
Նախ ի Հոգւոյն մաքրեալ զգին,
Հօր զօրութեան օթարանին»։

Ահաւասիկ երկու վկայութիւններ, մէկը բերուած Հ. Ներսէս Տէր Ներսէսեանի կողմէ, որ Շնորհալիի գրածը իր ուզած ձևով հասկնալու համար կ'աւելցնէ «Նախ քան Ս. Հոգիին եկաւորութիւնը» բառերը, մինչ միւսը, բերուած մեր կողմէ, Շնորհալիի իսկ բառերով կը հաստատէ. «Նախ ի Հոգւոյն մաքրեալ զգին, Հօր զօրութեան օթարանին»։ Այսպէս, «թեր ու դէմ բանաձևերու համեմատութեամբ» աւելի որոշ կը տեսնուի այն խախուտ հիմը, որուն վրայ կը փորձէ Հ. Ն. Տէր Ներսէսեան կառուցանել իր խարխուլ տեսութիւնը։

Գեր. յօդուածագիրը սապիսի չքնաղագիւտ վերագրում մըն ալ կ'ընէ մեզի իր եզրակացութեան մէջ։ Ն. Եպս. Ծովական «Տիրամօր մէջ կը դնէ սկզբնական մեղքը (հակառակ Գուշակեանի), իսկ անոր ջնջումը կը դնէ Աւետման օրը (հակառակ Տաթևացիի)» (էջ 99)։

Հոս աչքի կը զարնէ խորամանկութիւնը Բազմավէպի յօդուածագրին, որ անպարտական ձեռնածութեամբ նախադասութիւնները կը տեղափոխէ։ Զեղծեալ այդ եզրակացութիւնը սրբագրելի է սապէս.

Ն. Եպս. Ծովական չէ որ «Տիրամօր մէջ կը դնէ սկզբնական մեղքը», այլ Ս. Գրիգոր Տաթևացին, գրելով. «Կոյսն Մարիամ Աստուածածին՝ էր ազատ ի մահացուէն և ի ներելւոյն, բայց ոչ ի սկզբնականէն զոր Հոգւովն Սրբով մաքրեցաւ։ Բայց միայն Փրկիչն մեր Քրիստոս էր ազատ ի սկզբնականէն։ Որոյ պատճառ է, զի ո՛չ ի սերմանէ՝ այլ ի մաքուր արենէ Կուսին էառ մարմին» (Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 568)։

Ս. Գր. Տաթևացիի այսքան պայծառ և պատճառաբանեալ տեսութիւնը չ'ընդունիր Հ. Ն. Տէր Ներսէսեան, և առանց ոևէ փաստի կը պնդէ թէ Ս. Կոյսը «զերծ է սկզբնական մեղքէ» (էջ 95)։

Ն. Եպս. Ծովական չէ որ սկզբնական մեղքի «ջնջումը կը դնէ Աւետման օրը», այլ Ս. Ներսէս Շնորհալի, գրելով.

«Էջ ահեղօքն հրեշտակին,
Բնակիլ յարգանդ սրբոյ Կուսին.
Նախ ի Հոգւոյն մաքրեալ զգին,
Հօր զօրութեան օթարանին» (Բանք Չափաւ, էջ 176)։

Կրկնեցինք այս մէջբերումը, այն յոյսով որ անոր վերստին ընթերցումը կրնայ լուսաբանել կարգ մը միտքեր, որոնք մեր երանելի նախնեաց գրածները յստակ աչքերով, առանց գունաւոր ակնոցներու, կարդալու չեն վարժուած։

Զանց կ'ընենք վկայութիւնները Գր. Դ. Պահլաւունի Կաթողիկոսին և Իգնատիոս Վարդապետին որոնք ձայնակից են Ն. Շնորհալիին (Տես Սիոն, 1954, էջ 200, 2 և 201, 5)։

Ուստի Ն. Եպս. Ծովական չի՛ շեղիր «իր իսկ հարազատ վարդապետներու գիծէն և ուղղութենէն», ինչպէս կ'ուզէ կարծել Հ. Ն. Տէր Ներսէսեան, այլ կ'աշակերտի և կը հետևի Հայաստանեայց Եկեղեցւոյ սուրբ և ուղղափառ Վարդապետներուն՝ Շնորհալի Ներսէսին և Տաթևացի Գրիգորին, և «անոնցմէ վկայութիւններ կը հաւաքէ» խորապէս քննելով անոնց իմաստները։

Ուրախ պիտի ըլլանք եթէ այս տողերը առիթ հանդիսանան որ մեր Ս. Եկեղեցւոյ Հայրերուն գրուածքները չխեղաթիւրուին ոմանց կողմէ, սխալ մեկնութիւններով և քաշքշուք բացատրութիւններով, իրենց չէլ հաշիւներուն պատշաճեցնելու համար զանոնք։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

# ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

## Ա.

## ՆԱԽԱԲԱՆ

Միջնադարեան հայ գեղարուեստի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ է գրաւում երաժշտական արուեստը, որ զարգանում է գլխաւորապէս պատմական վանքերում հիմնուած ա՛յն դպրոցներում, որոնք հայ մատենագրութեան, գիտութեան և արուեստի նշանաւոր կենտրոններ են հանդիսանում։ Պատմական այդ լուսաւոր օջախներում երևան են գալիս հայ գրականութեան և գեղարուեստի վաստակաւոր դէմքերից շատերը, որոնք իրենց ստեղծագործութիւններով զարկ են տալիս ժամանակի մշակութային շարժման և վառ պահում հայ մատենագրութեան և արուեստի ջահը։

Այդ տեսակէտից, հայ գրականութեան պատմութեան մէջ ուրոյն տեղ են գրաւում 7–10րդ դարաշրջանները։ Արաբական գերիշխանութեան ժամանակաշրջանն է դա, ուր հայ մշակութային կեանքը ոչ միայն կանգ չի առնում, այլև նոր երանգ է ստանում, մանաւանդ երաժշտական արուեստը հետզհետէ ձևակերպւում է և ուշագրաւ նուաճումներ անում։

«Արաբական տիրապետութեան շրջանում, — գրում է երաժշտագէտ-տեսաբան Սպիրիդոն Մելիքեանն իր «Ուրուագիծ Հայ Երաժշտութեան Պատմութեան» արժէքաւոր գրքոյկում, — ծաղկում են հայոց վանքերը, ուր և կենտրոնանում, զարգանում են միջնադարեան գիտութիւնն ու արուեստը. այդտեղ էլ սկզբնական համայնական երգից ծաղկել ու զարգացել է նաև մեր ներկայ բաւականին հարուստ եկեղեցական երաժշտութիւնը՝ շարականը, ժամագիրքը, պատարագը, մեղեդիները, գանձերը, տաղերը, ստեղիները։ Այդ և հետագայ շրջանի երաժշտական կենտրոններից յայտնի են՝ Կամրջաձորի, Նարեկի, Խլաձորի, Կապուտաքարի, Հնձուց, Դպրեվանքի, Ծախացքարի, Ստեփաննոսի, Տանձատի և վերջապէս Տաթևի վանքերը, որոնք լցրին ամբողջ երկիրը անհամար երաժիշտներով»։

Այնուհետև Արևելեան Հայաստանում առանձնապէս մեծ համբաւ են վայելում Սանահնի, Տաթևի, Գլաձորի, Հաղբատի, Նորավանքի, Բաղնայրի, Տարօնի, Աղթամարի և այլ դպրոցները, որոնք հայ գրչութեան, մանրանկարչութեան, երաժշտութեան, գրականութեան ու գիտութեան զարգացման առաջնակարգ կենտրոններ են հանդիսանում։

9րդ դարում նշանաւոր է դառնում Տաթևի համալսարանը (վարդապետարանը), որ հայ մշակոյթի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ է գրաւում։ Պատմագիր Ստեփաննոս Օրբէլեանն ընդգծում է, թէ մենաստանը լի էր «երաժշտական երգերի փիլիսոփաներով. ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբ. նաև արհեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք»։ Արդարև, Տաթևի վարդապետարանն իր անյաղթ փիլիսոփաներով, աննման երաժիշտներով, հմուտ վարդապետներով, իր վարպետ նկարիչներով և իր ճոխ գրադարանով հայ վանքերի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ է գրաւում։

Նոյնպէս 13–14րդ դարերում Տաթևի դպրոցը մեծ հռչակ է վայելում։ Ստ. Օրբէլեանը գրում է թէ «նա հայոց բոլոր գիտուններին գլուխն էր. ինչպէս Աթէնքը՝ յունաց և հռովմայեցիների մէջ»։

Միջնադարի մատենագրական և գեղարուեստական շարժման մի այլ գեղեցիկ պատկերը տեսնում ենք նաև Կիլիկիայի հռչակաւոր վանքերում, որոնցից առանձնապէս յայտնի են Կարմիր Վանք, Մորոյ Վանք, Փոս անապատ, Արքակաղին, Դրազարկ, Սկեւռա, Ակներ, Գայլու անապատ և այլ մենաստաններ, որտեղ փայլում են ոչ միայն հմուտ թարգմանիչներ, քերականա-

digitised by A.R.A.R.@

գէտներ, հռետորներ, իմաստասէրներ, այլև երաժշտական արուեստը հետզհետէ ձևակերպւում է և զարգանում։ Դեռ 13րդ դարում փայլում է Արքակաղնի նշանաւոր վանքը, որ յայտնի է դառնում որպէս «երաժիշտների վայր»։ Այդտեղ երաժշտական ձիրքով օժտուած վանականները շատ մեղեդիներ են երգում, շատ շարականներ յօրինում, բաժանում են ձայները և կարգի բերում ու դասաւորում։ Դա Ռուբինեանց գերիշխանութեան պատմաշրջանն է, ուր հայ մատենագրութիւնն ու արուեստը առանձին փայլ ու երանգ են ստանում։

Ընդգծենք մի կարևոր հանգամանք ևս։ Հայ գրականութիւնն ու արուեստը ուշագրաւ նուաճումներ անում են գլխաւորապէս 12-14րդ դարերում։ Այդ ժամանակաշրջանում ծաղկում են ժողովրդական բանահիւսութեան էջերը։ Ուրոյն տեղ է գրաւում նաև պատմագրութիւնը։ Դարաշրջանի վաստակաւոր պատմագիրների շարքում յայտնի են՝ Մատթէոս Ուռհայեցի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Բարձրբերդցի, Մաղաքիա Աբեղայ, Ստեփաննոս Օրբէլեան՝ որոնք արձանագրել են հայ ժողովրդի պատմութեան մի շարք հիմնական և յուզիչ էջերը։

Միջնադարի հայ գեղարուեստական գրականութեան մէջ պատուաւոր տեղ է գրաւում նաև բանաստեղծական արուեստը, որի լաւագոյն դրօշակիրներն են՝ Ներսէս Շնորհալի (12րդ դար), Ֆրիկ և Կոստանդին Երզնկացի (13րդ դար), Յովհաննէս Երզընկացի (13–14րդ դար), Յովհաննէս Թլկուրանցի (14րդ դար)։

Պատմաշրջանի հայ հռչակաւոր տաղերգուների հետ հանդէս են գալիս նաև նշանաւոր առակախօսներ, որոնցից 12րդ դարի վերջերին և 13րդ դարի սկիզբներին փայլում է Վարդան Այգեկցին, որի առակները, նովէլները և անէկդոտները, իրենց բովանդակութեամբ, կառուցողական արուեստի նրբութեամբ և սրամտութեամբ, գեղարուեստական մեծ արժէք են ներկայացնում։

Հայ հին մատենագրութեան մի այլ ուշագրաւ երևոյթն իրաւաբանական գրականութիւնն է, որի պարծանքն է կազմում մի հայ գիտնական։ Դա 12րդ դարի յայտնի օրէնսգէտ, իրաւաբան և առակագիր Մխիթար Գոշն է, որի հայ մատենագրութեան նուիրած երկերից ամենանշանաւորը «Դատաստանագիրք»ն է, որով ղեկավարւում էին միջնադարեան Հայաստանի բոլոր հայ դատաւորները։ Գոշի երկերի մէջ պատուաւոր տեղ են գրաւում նաև «Առակները», թուով 190, որոնք միջնադարի հայ գեղարուեստական գրականութեան գեղեցիկ էջերն են կազմում։

Դարաշրջանի հայ մատենագրութեան մէջ ուրոյն տեղ են գրաւում նաև բժշկական գիտութեան նուիրուած երկերը։ Դեռ 12րդ դարում մեծ համբաւ է վայելում մի նշանաւոր բժիշկ։ Դա Մխիթար Հերացին է, որ հայ բժշկական գրականութիւնը հարըստացնում է «Ջերմանց Մխիթարութիւն» խորագիր գրքով։

Նոյն պատմաշրջանում ծաղկում և նոր փայլ են ստանում նաև հայկական ճարտարապետութիւնը և քանդակագործական արուեստը։ Այդ գեղեցիկ յուշարձաններից ճարտարապետական խոշոր արժէք են ներկայացնում Գօշավանքը, Հաղարծինը, Սանահնի և Հաղբատի վանքերը, Գեղարդի վիմափորը, Ծաղկաձորի եկեղեցիները և այլ կոթողներ, իսկ իրենց նրբութեամբ յայտնի են Գօշի խաչքարերի գեղազարդ քանդակները, Սիւնեաց բարելէֆները և այլ գեղեցկութիւններ, որոնք իրենց ուրոյն ոճով պատուաւոր տեղ են գրաւում հայ ճարտարապետութեան վերածնութեան մէջ։

Միջնադարում առանձին փայլ է ստանում նաև նկարչութիւնը, մանաւանդ մանրանկարչութիւնը։ Ժամանակի տաղանդաւոր մանրանկարիչները՝ Իգնատիոս, Կիրակոս, Յովհաննէս, Թորոս Ռոսլին, Գրիգոր Երէց, Սարգիս Պիծակ, իրենց վարպետ և ձևակերպուած վրձիններով և գրչով, մանրանկարչական, գեղագրական և գրչական արուեստներին առանձին փայլ ու երանգ են տալիս։

Ահա նոյն ժամանակաշրջանում էլ հայ երաժշտագէտները ձայնագրում են մէկը միւսից գեղեցիկ երգեր, կերտում են գըլխաւորապէս հայկական հարազատ ոճով և զարկ տալիս հզօր երաժշտութեան, որը 4–5րդ դարերում սկիզբն առնելով՝ իշխող դեր է ունեցել մեր ամբողջ միջնադարեան կուլտուրական կեանքում»(*)։

(*) «Ուրուագիծ Հայ Երաժշտութեան» Սպիրիդոն Մելիքեանի։

Հայ հնագոյն վաստակաւոր երաժշտագէտները յօրինել են զանազան երաժշտական նշաններ, նշանագրեր, խազեր և աւանդ են թողել հետագայ սերունդներին։

Այդ հանգամանքն են ընդգծում հնագոյն ձեռագիր շարակնոցներն ու աղօթամատեանները, որոնց էջերը զարդարուած են բազմաթիւ երաժշտական նշաններով և խազերով։ Դրանք հայկական ձայնանիշներն են։

Թէ իսկապէս ո՞ր դարում սկիզբ են առել հայ երաժշտական ձայնանիշերը, ժամանակի ընթացքում ինչպէս են ձևափոխուել և զարգացել, ովքե՞ր են հայ երաժշտական նշանագրերի և խազերի առաջին հեղինակները, այս էական հարցերը հայ գիտական արուեստի պատմութեան մէջ դեռ վերջնականապէս չեն պարզաբանուած։ Միայն հայ և օտար բանասէրներից և երաժշտագէտներից շատերը գտնում են, որ հայկական երաժշտական նշանագրերը Բիւզանդականից աւելի հին են և կրում են հեթանոսական հայ եղանակների ազդեցութիւնը։

Հայ երաժշտական եղանակներն առանձին փայլ ու երանգ են ստանում 5րդ դարում։ Այդ մասին ունենք մի թանկագին երկտող։ Դա 5րդ դարի վերջին և տաղանդաւոր պատմիչ Ղազար Փարպեցին է, որ Յունաստանում բարձրագոյն կրթութիւն է ստացել և Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնեանի յանձնարարութեամբ գրել է «Հայոց Պատմութիւնը», ուր Ս. Սահակ Հայրապետի մասին ընդգծել է որպէս «երաժշտական տարից» հմուտ մէկը։

Բանանք նաև 10րդ դարի վերջին և 11րդ դարի սկզբին ապրող Ստեփանոս Ասողիկի պատմութիւնը, ուր պատկերանում է վանահայր և երաժշտագէտ Սամուէլ Կամրջաձորեցու նկարն այսպիսի բնորոշ տողերով «...Իմաստական Սամուէլ, բազմաշնորհ 'ի գիտութիւն գրոց սրբոց և յերգս երաժշտութեանն»։

Սակայն, հայ երաժշտական խազերի յայտնաբերման ու գործածութեան համար պարտական ենք 12րդ դարի տաղանդաւոր երգահան և նշանաւոր հոգևորական Խաչատուր Վրդ. Տարօնեցուն։

Երաժշտական ձայնանիշերի հմուտ վարպետ էր նաև 12րդ դարի տաղանդաւոր բանաստեղծ-երաժշտագէտ և երգիչ Ներսէս Շնորհալին, որ հայ երաժշտական գրականութեան նուիրել է հայկական ձայնանիշերով յօրինած բազմաթիւ շարականներ, գանձեր և տաղեր, որոնք փայլում են ժողովրդական եղանակների արուեստի ոգիով, նրբութեամբ ու պարզութեամբ։

Արձանագրենք և այն, որ հնագոյն երաժշտական ստեղծագործութիւնների մէջ ուրոյն տեղ են գրաւում շարականները, որոնք իրենց բովանդակութեամբ պատկերում են Քրիստոսի կեանքի ու գործունէութեան պատմութիւնը, երգում են նաև եկեղեցական սրբերի, նահատակների կեանքը և կամ արտայայտում են ապաշխարութիւն, օրհնութիւններ ու բարոյական խրատներ։ Այդ հոգևոր երգերի հիմնական նպատակն է՝ տարածել քրիստոնէական գաղափարախօսութիւնը և զօրացնել հաւատացեալների կրօնական ու բարեպաշտական զգացումները։

Շարականներն ունեն շարական, կարգ և կանոն խորագրերը, որոնց ուսուցողները հնում կոչուել են «փիլիսոփայ», իսկ շարականների հաւաքածուն՝ «Շարակնոց», որ 615 թւին կազմել է Բարսեղ Վարդապետը։ Բայց դա պատահականութեան արդիւնք չէր։ 5րդ դարից յետոյ շարականները շատանում են և ժամակարգութեան մէջ շփոթութիւն առաջ բերում։ Այդ դրութեան վերջ տալու համար Ներսէս Գ. Կաթողիկոսի պատուէրով՝ Շիրակայ Դպրեվանքի «Ճոնի» կոչուած Բարսեղ Վարդապետն ընտրում է հայոց եկեղեցում երգուելիք շարականները և կազմում շարակնոցը, որ կոչւում է «Ճոն-ընտիր»։ Ահա այդ շարակնոցը մինչև օրս էլ անփոփոխ գործածւում է հայոց եկեղեցիներում։

Նկատենք և այն, որ շարականներն երգւում են որոշ օրերին ու ժամերին՝ ընդունուած ութը ձայնով, կանոնով ու շարքով — օրհնութիւն, Հարցն, Գործք, Մեծացուցէ, Ողորմեա, Տէր յերկնից, Ճաշու, Մանկունք, Համբարձի։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի՝ 1)

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

# ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

•

*Ատելայիտ՝ մայրաքաղաքն է Հարաւային Աւստրալիոյ. Խաղաղականի եզերքը, 2334 ոտք բարձրութեամբ լերան մը փէշերուն վրայ կը տարածուի։ Լերան գագաթէն կարելի է դիտել 50 մղոն հեռաւորութեան վրայ սփռուած քաղաքին արուարձաններն ու մրգաստանները։ Ատելայիտ Աւստրալիոյ երրորդ մեծ քաղաքն է, 300.000 բնակչութեամբ. ունի շուրջը բերրի ու մրգաստան դաշտեր ու արտեր. Երկրորդ Մեծ Պատերազմի շրջանին եղած է զինուորական ազդամթերքի մեծ կայան մը Ամերիկայի զինուորական գործողութեանց։ Ճարտարարուեստը կամաց կամաց կը ծաղկի և երկրին յառաջդիմութեան ճամբան հաստատուն հիմերու վրայ կը դնէ, տնտեսական նախանձելի դիրք մը տալով իրեն։*

*Լերան բարձունքին վրայ կանգնած է Քէփթըն Ֆլէնտրի յուշարձանը, որ կը յիշեցնէ 1802ի պատմական արշաւանքները և գրաւման հերոսութիւնները։ Քաղաքը լաւ ծրագրով շինուած է, ընդարձակ լայն պողոտաներով, փառահեղ ու շքեղ շէնքերով, կառավարական ու զանազան մեծ հաստատութեանց տուներով, ընդարձակ հանրային պարտէզներով։*

*Երեկոյեան ժամը 7ի առեններ քաղաք մտանք և ուղղակի մեր հետեւորդներով գացինք Ն. Դրիգորեանի տունը, որ մեզի համար պանդոկի պատրաստութիւններ տեսած պիտի ըլլար։ Ժամու մը չափ պանդոկի մէջ լուացուելէ և հանգստանալէ ետք, կատարեցինք մկրտութիւնը Եղիա Բէշիշեանի փոքրիկ աղջկան, Ն. Դրիգորեանի տան մէջ։*

*Մկրտութենէն անմիջապէս ետք, Տիկ. Դրիգորեանը սեղան շտկեց, ընթրեցինք, ապա գացինք Պր. Եղիա Բէշիշեանի սրճարանը, տօնախմբելու իր պզտիկին մկրտութիւնը, սրճարանը գոցուած ըլլալով յաճախորդներուն համար։*

*Չորս օր մնացինք հոն քիչ մը հանգիստ տալու մեր մարմիններուն և դադար մեքենային, որպէսզի վերադարձը չըլլայ շատ յոգնեցուցիչ, մանաւանդ ամառուան սաստիկ տաքերուն. քանզի անապատային վայրերէ պէտք պիտի ըլլայ կտրել անցնիլ 1200 մղոն ճամբայ մը։ Վայելեցինք տեղւոյն հայերուն ասպնջականութիւնը, ամէնուն տուներն ալ այցելեցինք, բոլորին հետ ալ մօտէն ծանօթացանք, այդ հեռակայ երկրին մէջ, ափ մը նշխարներ՝ բեկորները մեր ցեղին կեանքի կառչած կը մնան, ամէն գինով կ'ուզեն պահել իրենց ցեղային ու կրօնական ինքնուրոյնութիւնը։ Ուրախ էինք մենք իրենցմով, ուրախ էին իրենք մեզմով չորս օր շարունակ. մենք զիրենք գտանք և իրենք մեզ կը փնտռէին անյոյս ու տխուր. ոչ կորուսից և ոչ մի ի նոցանէ . . .։*

*Ովկիանոսներ ու անապատներ շրջելով ամէն կողմ տարտղնուած Հայ ազգին հողմացրիւ խեշերանքները հաւաքելու, իրար բերելու համար շատ ճիգ ու աշխատանք պէտք է, մանաւանդ համբերութիւն ու խոհեմութիւն, գահավէժներու ծայրը հասածները կորուստէ փրկելու համար։ Ճիշդ այս տողերը գրած առենս ներկայացաւ տիկին մը անծանօթ, յուզուած ու այլայլած, աղաւաղուած հայերէնով մը. իր հայրը կորսնցուցած երկու շաբաթ առաջ, այսօր միայն իմացեր է որ հայեր և հայ եկեղեցական մը կայ հոս. եկաւ գտաւ զիս. ամուսինը օտար մըն է, բայց ինքը կը սիրէ ու կ'ուզէ գալ իր Եկեղեցին, հօրը համար հոգեհանգիստ կ'ուզէ կատարել տալ և տակաւին մէկիկ մէկիկ դուրս պիտի գան կորստեան խոր վիհերէն, պէտք է գտնենք բերել, պէտք է գտնենք կեանքի կոչել։*

*Ինծի համար աշխատանքի և յոգնութեան օրեր էին այդ օրերը, հազարաւոր մղոններ ճամբորդել, պատարագել, մկըրտել, տուները և գերեզմանները օրհնել տեղէ տեղ հոգեկան հաճոյք մըն էր ինծի, Աստուած ուժ, կարողութիւն և համբերութիւն տուաւ կարծես որ անտրտունջ ու զուարթ մտքով և տրամադրութեամբ կատարեմ, մանաւանդ տեսնելով անոնց մխիթարուած սրտի և հոգիի աննկարագրելի ապրումները, հայելիացած իրենց աչքերուն մէջ ու դէմքերուն վրայ։ Ինչ քաղցր է ուրախանալ ուրիշներու ուրախութիւնով և մխիթարուիլ ուրիշներու մխիթարութեամբ։*

*Վերջապէս, հասած ըլլալով մեր ճամ-*

digitised by A.R.A.R.@

բորդութեան վերջնական հանգրուանը, տեսած ըլլալով հայութեան ցրուած բեկորները, կատարած ըլլալով իբրև եկեղեցական մեր կրօնական պարտականութիւնները, պէտք է այժմ վերադառնանք Սիոնի։

Ատելայտէն Մելպըրն 570 մղոն է կարճ ճամբով, զոր պէտք է մինչև իրիկուն կըտրել։ Առտուն զով օդին կարելի է բաւական արագ երթալ։ Առաջ Աստուծոյ, յետոյ Գրիգորի վրայ է մեր յոյսը։ Ռումանահայ երիտասարդ մըն է ան, հայկական դիմագիծով և հայկական սրտով, քիչ մը գիրուկ և համառ բազուկներով, միջահասակ։ Մեքենային աստուածն է, կը շինէ մեքենայի զանազան մասերը և գործիքներ, գիւտեր ալ ըրած է անոնց վրայ, մօնօբօլին ունի, Աւստրալիոյ մէջ քաղաքէ քաղաք կ'երթայ մեծ կառաժներուն, իր յաճախորդներուն և գործակատարներուն, նոր ապրանքներ ընծայելու, նոր հնարած գործիքները ցոյց տալու։ Անկէ վեց տարի առաջ այս երկիրը եկած է Գրիգորը, առանց լեզուն գիտնալու և առանց սէնթ մը ունենալու իր գըրպանը. իր ճարպիկութեամբ և հնարամտութեամբ սկսած է այս գործը երկու տարիէ ի վեր։ Հրապարակի վրայ կը փնտռուին արդէն իր շինած գործիքները։ Ունի չքնաղ բնաւորութիւն. ամուսնացած հայ աղջկան մը հետ, երկու զաւակներու հայր է արդէն։ Կը սիրէ իր ազգն ու Եկեղեցին. երկու երեք տարի ապրած է այս երկրին մէջ առանց հայու մը հանդիպելու և առաջին հանդիպած հայ օրիորդին հետ ամուսնացած է։ Ապագայ խոստացող հայ մըն է Գրիգորը։

Հազիւ քաղաքէն 50–60 մղոն հեռացած, յանկարծ կառքը նոր շինուող ճամբու եզերքէն սրացած միջոցին ուժգին կերպով ցնցուեցաւ, ծառի հսկայ արմատ մը զարնուելով, որ կակուղ հողին մէջ թաղուած էր և կը կտրի բան մը. Գրիգոր կանգ կ'առնէ ճամբու եզերքին, կը հանէ ճաքէթը և կառքին տակ մտնելով իսկոյն կը կպցնէ կոտրած մասերը իրարու թելով մը և ճամբան կը շարունակենք 20 վայրկեան կորսնցնելէ ետք։ Կառքը 1947ի Ամերիկեան Բիւիք է, բաւական հին բայց տակաւին տոկուն վարպետին ձեռքին մէջ, լաւ ճամբուն վրայ 70–75 արագութեամբ կ'երթայ. պէտք է կանուխ հասնիլ Մելպըրն։

Ճամբան երգելով, կատակելով, երբեմն կենալով տեղ տեղ զովացուցիչ մը առնելու կամ օթոյին կէզը նորոգելու պատրուակաւ, միջին հաշուով 50 մղոն արագութեամբ կ'երթայինք, իսկ Տիկ. Շաքէն իր ամուսնոյն հետ ետև նստած պատուէրներ կը հրամցնէր երբեմն, մեզի քիչ մը ուժ տալու և արթուն պահելու համար. վասնզի երկար ճամբորդութիւնը և ամառուան տօթը ծանրօրէն կը ճնշէին մեր կոպերուն վրայ և պայծառ արևը կը ներգործէր մեր աչքերուն. կը գոցուէին ինքնաբերաբար մեր արտևանունքները ու կառքին միօրինակ ցնցումէն օրօրուելով կը քնանայինք գրեթէ բոլորս ալ, բացի խեղճ Գրիգորէն որ պէտք էր արթուն կերպով վարէր իր կառքը, որպէսզի այդ ոլորապտոյտ ճամբաներուն վրայ փորձանք մը չպատահի։

Հասանք Ararat քաղաքը, Մելպըրնի հարաւ արևմտեան կողմը, շուրջ 130 մղոն հեռաւորութեամբ, Վիկտորիա նահանգին մէջ։ Գէթ հայ մը ըլլար հոս ապրող Արարատի երկրէն, ոչ մէկ հայ։ Պզտիկ քաղաք մը, շրջապատուած բերրի դաշտերով, անտառածածկ տափաստաններով և քիչ մը Արարատը յիշեցնող պզտիկ լեռներով, մութ կանաչ ծառերով ծածկուած, երկաթուղի ճամբուն վրայ, այգիներով ու պտղատու ծառերով հարուստ բնաշխարհ մըն է. ունի նաև ոսկիի հանքեր ու շինարարութեան համար հսկայ ծառի անտառներ։ Գեղեցիկ պանդոկի մը առջև կանգ առաւ մեր ինքնաշարժը։ Գրիգոր կ'ուզէ խմել զարեջուր մեր Արարատին կենացը, այն Արարատին՝ որ մեր մտքերուն մէջ կը սլաքուի ու մեր կուրծքերուն վրայ կը բարձրանայ երկնաբերձ, կարծես կը տեսնուին անոր յաւիտենականութեան հետ խառնուող ձիւնապատ ու ամպածրար կատարները աշխարհի բոլոր ծայրերէն, հայրենիքի ու հայութեան սըրբազան խորհրդանիշը, որուն շուրջ Հայկը, Արամը, Արտաշէսներ ու Տիգրաններ ապրեցան, ամբողջ հայ ժողովուրդը հեռուէն ու մօտէն կ'ապրի դէպի անոր սեւեռած իր նայուածքը իբրև ազատութեան ու անմահութեան յաւիտենական ներշնչարանն ու խորհրդանիշը, որուն սարերէն արեան ամեհի գետեր հոսեցան դարեր շարունակ, իրարու բաղխեցան աշխարհի բոլոր տիրանները դղրդալից շառաչիւններով, անհղա-

digitised by A.R.A.R.@

տառո գոչմամբ. այդ բոլորին իբրև լուռ վկան կը մնայ աշխարհի չորս ճամբաներուն վրայ՝ կ՚ըսեմ Գրիգորին որ քշէ կառքը, վասնզի այստեղի բոլոր խմիչքները դառն են, ամէն օր կը թունաւորեն մեր արիւնը, մեր սիրտն ու հոգին, ամէն օր դէպի մահ-ուան, անփառունակ մահուան գերեզմանը առաջնորդելով մեր քայլերը։ Օտարութեան փուշերն ու տատասկները կը կծեն յար մեր դողացող սիրտն ու հոգին, հեռու վարուած տասնեակ հազար մղոններ մեր սրբազան Արարատէն, միւսները բոլոր սուտ ու կեղծ են, ոչ ձիւն կայ և ոչ ալ Տապանը նոյեան այդ փոքրիկ մեծութիւններուն վրայ, ոչ հայ կայ և հայութիւն այս տարաշխարհիկ Արարատի երկրին մէջ, մենք մեր Արարատը, մեծ Արարատը ունինք, մեր սրտերուն խորը արձանացած։

Պէտք եղաւ Մելպըրն սպասել օր մը, քիչ մը խանգարուած մեքենան շտկելու, կարգադրուելիք պզտիկ գործերն ալ վեր-ջացնելէ ետք 600 մղոն եւ մէկ շունչով և մէկ օրուան մէջ ընելու որ ժամանակին հասնինք Սիտնի, Կիրակի օրուան պատրաս-տութիւններ տեսնելու։

Մելպըրն եղած ատեննիս անգամ մըն ալ փորձեցինք քաղաքապետին այցելելու, բայց տակաւին շատ զբաղած ըլլալով, յա-ջորդ անգամուան այցելութեանս խոստա-ցաւ անպատճառ միջոց մը ստեղծել իրար հանդիպելու։

Մարտ 4, Ուրբաթ առտուն ժամը 6ին ճամբայ ելանք Մելպըրնէն դէպի Սիտնի։

Տիար Ս. Բանիկեանը ետեւը նստեցաւ, իր ժամագիրքը ձեռքը, մինչև կէսօր քա-ղեց իր գիտցած բոլոր աղօթքներն ու շա-րականները, քթի տակէն մրմռալով, եր-բեմն լացի պատին տակ աղօթող հրեայ ռապպիներու ջերմեռանդութեամբ։ Այո, իրեն համար աղօթքը կեանքի առաջին ու վերջին պահանջքն է։ Տիար Բանիկեան իր բարձրագոյն ուսումը առած է Պէյրութի Ամերիկեան համալսարանին մէջ, իբրև ա-ռևտրական և տնտեսագէտ. դպրոցի աշխոյժ ու փայլուն աշակերտներէն մին եղած է. աղօթքի զօրութեան շատ կը հաւատայ, ինչպէս շատ մը մեծ գործիչներ ու նշանա-ւոր մարդիկ։ Մեծ աղօթողները մեծ կամքի ուժ ունեցած են և նշանաւոր դարձած իրենց աշխարհահռչակ առաջնորդութեամբն ու գործերով։ Կէսօրէ յետոյ տեղերնիս փոխե-ցինք. ինքը նստեցաւ Գրիգորին մօտ որ զայն արթուն պահէ, որովհետև չափէն աւելի յոգնեցուցիչ է Սիտնիի ճամբան, ի մասնաւորի իր զիկզակներով ու շուրջ վեց հարիւր մղոն հեռաւորութեամբ։

Իրիկուան ժամը 7.30ին, ողջ առողջ հասանք Սիտնի. Գրիգորը վարձատրուեցաւ քանի մը սկահակ ճանիվօքըրով, Պր. Բա-նիկեանին կողմէ, իբրև լաւ և վարժ վարիչ։ Տնեցինները շատ ուրախ եղան որ հայրիկը ողջ առողջ վերադարձաւ տուն։ Ինծի հան-դէպ այս ընտանիքին ցոյց տուած ջերմե-ռանդ ու հաւատաւոր վերաբերումն ու գո-հողութեան ոգին ամէն բանէ վեր է, կը յիշեցնէ առաքելական դարու այն հաւա-տաւոր ու զոհաբերող ընտանիքները՝ որոնք ամէն բան առաքեալներու ոտքերուն տակ կը դնէին ու նոյնիսկ կը զոհաբերէին իրենց քաղցր ու թանկագին արիւնը, Քրիստոսի ու քրիստոնէութեան դատին սիրոյն։

Մեր այս առաջին ուղևորութիւնը դէպի Աւստրալիոյ Հարաւային Արևմտեան նա-հանգները, ուր ցրուած կ՚ապրին մեր ազգի վայրավատին բեկորները, եղաւ շատ օգտ-աւորիչ ու մխիթարական։ Անկէ յետոյ, տա-րին առնուազն երկու երեք անգամ պէտք է որ այցելենք այդ կողմերը, միշտ ար-ծարծելով նոր շունչ ու ոգի անոնց մէջ։

Աւստրալիոյ հայ գաղութը երթալով կը մեծնայ. իրենց տնտեսական վիճակը երկրի յառաջդիմութեան հետ զուգահեռաբար կ՚ընթանայ արագ։ Երկրի մէջ անգործու-թիւն չկայ, ընդհակառակը, աշխատող բա-զուկներու կարիքը շատ է. կառավարու-թիւնը մտադիր է նոյնիսկ Անգլիայէն ու Գանատայէն մաս մը անգործ մարդիկ բերել այս երկիրը։ Աւստրալիոյ հայոց մէջ, սե-փական գործ ունեցողներ քիչ են տակաւին, բացի հինէն եկած հաստատուած քանի մը հայերէն, որոնք արդէն ապահովուած են գրեթէ, ահագին դժուարութիւններու մէջէն անցնելէ յետոյ։ Ֆիզիքական աշխատանքը լաւ կը վարձատրուի։ Ամերիկայէն ետք, Աւստրալիան է ուր բանուորը ամենէն շատ վարձք կը ստանայ։ Աւստրալիա պէտք ունի մարդկային ուժի և հայերու, բայց ինչպէս Ամերիկայի մէջ՝ հոս ալ միենոյն դժուա-րութիւնները կան հայերուն դէմ....։

ԱՍՈՂԻԿ Ծ. ՎՐԴ.

Սիտնի

digitised by A.R.A.R.@

## ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆԷՆ

Սիոնի այս թիւով կը սկսինք յաջորդաբար հրատարակել Հոգ. Տ. Բաբգէն Վրդ. Ապահեանի Հնդկաստանի մասին տպաւորութիւնները: Ս. Աթոռոյս Ամեն. Տեղապահ Ս. Հօր եւ Տնօրէն Ժողովոյ հրահանգով Տ. Բաբգէն Վրդ. ղրկուած էր Հնդկաստան հոգեւոր առաքելութեամբ:

Հոգ. Հայրսուրբը հոն՝ մեր ժողովուրդին հետ մնաց Ամանորէն մինչեւ Նոր Կիրակի, գրեթէ չորս ամիսներ, պատարագելով, քարոզելով Հնդկաստանի մեր պատուական արենակիցներուն:

ԽՄԲ.

*Երկուշաբթի, 27 Դեկտ. 1954, առաւօտեան ժամը 2ին, ճամբայ կ'ելլեմ Ամերիկեան օդանաւով, Պէյրութի Խալտէ միջազգային օդակայանէն դէպի Կալկաթա, լեցուն՝ նոր միջավայր, նոր մարդիկ տեսնելու յուզումներով: Ներքին հոգեբանական այն վիճակը որ կուգայ մարդուն՝ անծանօթի երթալու զգացումէն: Կը նստիմ Թայլանտցի երիտասարդի մը քով, որ հաղորդական՝ շուտով կը մտերմանայ հետս եւ մենք կը խօսինք իր երկրին եւ իր յառաջդիմութիւններու մասին: Համակրելի եւ մտացի՝ պտտած էր Եւրոպա եւ Ամերիկա իր հայրենիքին գործին համար: Կը խօսի կրօնքէն եւ անոր հոգեբանական ազդեցութենէն մարդերու վրայ. Պուտտիստ ըլլալով՝ կը հաւատայ այն խորունկ աղերսին որ բոլոր կրօնները իրարու կը կապէ իբրեւ ձգտում եւ գործադրութիւն՝ մարդոց բարոյական եւ հոգեւոր կեանքի առաջնորդութեան գործին մէջ: Օդանաւը փոքրիկ աշխարհ մը՝ այժմ անկախ երկրի եւ երկինքի միջեւ ուր ճամբորդներ, ամէն ազգէ ու կրօնքէ, մտերիմ, ընտանի մթնոլորտ մը կը ստեղծեն: Կը ժպտին իրարու, կը խօսին ջերմ, անկեղծ, ջանալով հաճելի դարձնել շարժուն այդ բանտարկութիւնը: Ան կը սուրայ դուրսի մութին մէջէն դէպի արեւելք, լոյսը: Այնքան շուտ կը ծագի ան. լոկ մրափ մը մեքենաներու աղմուկին մէջ, որ կը լեցնէ ականջը այլազան եղանակներով որոնք երբեմն ծանօթ մեղեդիի մը կը վերածուին. միտքը ակամայ կ'երթայ հրաշքին որ փոխադրութեան այս միջոցը կը տրամադրէ իր բոլոր առաւելութիւններով: Հէքեաթին մոգական գորգը:*

*Լոյսին հետ կը բացուի վարի տեսարանը մեր աչքերուն: Ովկիանոսը որուն վրայէն հեզասահ շոգենաւ մը ու ձախին՝ այրած ու խանձած դաշտերն ու վէտվէտումները զայն եզերող երկիրներուն: Ու մտածել որ անկէ դարեր առաջ, առագաստանաւերով, գրաստներու վրայ երբեմն, հայուն նախաձեռնող ոգին ուժովցուցած է կամքն ու նկարագիրը անոնց՝ որոնք Հնդկաստանի եւ դրացի երկիրներու հարստութեան եւ ասպարէզին տարած են իրենց վաճառականական տաղանդը եւ շինած հնդկահայուն հրաշքը: Տակաւին Հնդկաստանի ծանօթանալով պիտի հիանայի այն տիտանեան տոկունութեան վրայ հային՝ որ հազարաւոր փարսախներու ճամբաներէն եւ անապատներէն, լեռներէ, բարքի կերպերէ տարօրինակ սովորութիւններու մէջէն, պայքարելով բնութեան դէմ, տարած է գաղափարը իր յաջողութիւններուն: Օդանաւը շատ առիթներ կուտայ մտածելու երբ պարտադրուած նոյն աթոռին՝ աչքերդ կը յածին արդէն մտերիմ քանի մը դէմքերու վրայ որոնք հեռաւոր արեւելքի ժողովուրդներու գիծերը կը բնորոշեն: Չինացին, Հնդիկը, Սիամցին, Ճափոնցին: Ճամբորդութիւնը մեծագոյն կրթութիւնն է կ'ըսեն եւ այդ ճիշդ՝ երբ գիտցածներդ կ'անցնին փորձառական բովէ եւ կը դրոշմուին անհետ մտքիդ եւ հոգիիդ վրայ: Օդը կը տաքնայ. կը զգանք այդ դուրսի գոլորշիէն եւ այրող դաշտերէն: Պէյրութի երկինքին քիչ մը ամպրոպային շրջանակէն վերջ հեզասահ մեր օդանաւը անամպ եւ պայծառ մթնոլորտին մէջէն կը լեցնէ գիս այնպիսի վստահութեամբ մը որ մտածել իսկ չի տար հազարներով մէթրերու անջրպետին մասին որ մեզ երկրէն, հաստատ հողէն կը բաժնէ: Ինը ժամերու թռիչք մը որ կը սպառնայ միօրինակ եւ տաղտկացուցիչ դառնալ, մեզ կը հասցնէ Քարաչիի օդակայանը: Տրանզիթ ճամբորդներս կ'առաջնորդուինք հիւրանոց մը կէսօրուան ճաշի համար: Դեկտեմբերի մէջ եւ օդը շատ տաք, մեր երկիրներու* խամսինը *յիշեցնող, մտածել կուտայ ինծի դիմաւորելիք տաք ամիսներուն մասին: Ճաշէն վերջ փոքրիկ պտոյտ մը օդակայանի սրահին մէջ, ուր այլազան ցեղեր, տարազներ, լեզուներ անմիջապէս մտածել կուտան հսկայ այն խառնարանին մասին որ Հնդկաստանն է: Կը խօսին պարսկահնդկերէն լեզուով մը: Բոլորն ալ կին ու մարդ սպիտակ հագուստներով, թեթեւ, հաճելի հագուած. ոմանք սանտալով եւ շատեր բոպիկ:*

digitised by A.R.A.R.@

Օդանաւը դարձեալ կը թռի. արդէն կը սկսի Հնդկական թերակղզին որուն ամբողջ լայնքը պիտի կտրենք հիմա։ Մինչեւ Տէլհի 4 ժամուան թռիչք մը նորէն։ Վարը գոլորշիներու մէջէն հազիւ նշմարելի հնդկական անապատը, ընդարձակ, գորշ, որ տեղ տեղ վայրի թուփերով կը բծաւորուի։ Ամէն ինչ կարծես կը վառի հոն։ Գետ մը օձագալար։ Աղքատ, ցեխաշէն գիւղեր լճակներու եզերքին։ Ու կը մտածեմ հնդկական համբերող ոգիին ու ճակատագրապաշտութեան մասին բնութեան այդ մեծ տարածութեան մէջ ուր կը վխտան օձերն ու վայրի կենդանիները կեանքի մեծ պայքարին համար ուր մարդը իր կամքին, իմաստութեան եւ հայեցողութեան կը դառնայ։ Անապատներու մէջ կը պատրաստուին մարգարէները, մեծ հայեցողները։ Ընդարձակութեան եւ անհունութեան մէջէն կը փնտռեն անոնք գերբնականը։ Փիլիսոփայութիւնը այնքան ծանօթ հնդկական մաքին։ Պուտտան հին օրերու, Թակորը, Կանտին եւ բոլոր մեծ ու պզտիկ հայեցողները, ճգնողները խորհուրդներու այդ աշխարհին, որոնք մարդկային տկարութեան եւ անկարողութեան ճամբով գերագոյն ճշմարտութիւններ որոնեցին։ Տիրապետեցին նիւթին եւ մարմնի կրքին վրայ հոգիի բարիքին համար։

Կը հասնինք Տէլհիի օդակայանը։ Հոն առաջին անգամ կը տեսնեմ հնդիկը։ Բարաչինը մահմետականն էր, նոյն ցեղի կնիքներով։ Կիները իրենց ճակտի բոսորեղ կէտերով՝ որոնք իրենց մութ գոյնին վրայ կարմիր՝ կը վառին կարծես շնորհալի իրենց մետաքսեայ սարիներուն մէջ. հանդարտ, խաղաղ դիմագիծով ու նայուածքով մը որ դէպի ներս կը դառնայ։ Արիական դիմագիծը մարդերուն որոնք կը մութնան սակայն արդիւնք հասարակածային կլիմային։ Իրենց սեւը աւելի եւս կը շեշտուի հագուստներու ճերմակներուն մէջ։ Տարօրինակ է դիտել բոպիկ ոտքերը ոմանց իրենց ճաշակաւոր հագուածքին քովն ի վեր։ Ի՞նչ դժուար կ'ըլլան սպասումները։ Նպատակակէտ Կալկաթան է ու կ'երկարի օրը օդակայանի սրահին մէջ։ Չորս կողմս խաղաղ նստած հնդիկներ, որոնք չեն ժպտիր, չեն խօսիր ու երբ խօսին փոքրիկ ձայներով միայն։ Կը նային անորոշութեան, խորհուրդներու մէջ ընկղմած մարդու հայեացքով։ Երբեմն կը խանդավառուի մթնոլորտը ներս մտնող Ամերիկացի զբօսաշրջիկներու աղմուկով, որոնք ամէն տեղ են հիմա, եւ զուարթ խօսակցութիւններով։ Հակադրութիւն մը ամէն ինչով հնդիկին. կը խորհիմ այս ճամբով նաեւ հակադրութիւններու այն խոշոր տարբերութեանց մասին որ այս երկու մեծ ազգերը իրարմէ կը զատեն։ Մին՝ արագ, միւսը՝ դանդաղ, մին՝ գործնական, միւսը՝ հայեցող, մին՝ դիւրահաղորդ, միւսը՝ ինքնամփոփ։ Ու կը զգամ ինքնավստահութիւնը Ամերիկացիին որ կուգայ իր երկրի ուժէն եւ տնտեսական անխորտակելի միջնաբերդէն։ Հնդկաստան մեծ երկիր, որուն մէկ մասը չափեցինք դեռ ժամերով օդանաւի թռիչքով եւ որ սակայն օտար լուծէ վերջ հանդարտ իր ապագան կը ջանայ պատրաստել չուզելով մտնել վէճի, քաղաքական եւ ընկերային կազերու մէջ։

Մութ է արդէն երբ կը պատրաստուինք թռիլ Կալկաթա։ Նորէն հեզասահ գնացքը օդանաւին. վարը երկրաչափական գիծերով լոյսերը Նոր Տէլհիին, Հնդկաստանի մայրաքաղաքին։ Ու կը խորանանք մութին մէջ։ Յաճախ լոյսերը քաղաքներուն վէրքի մը պէս կը բացուին լայնատարած խաւարին վրայ, մեզ լեցնելով ուրախութեամբ եւ յոյսով։ Օ՜ սարսափը մարդուն անստուգութեան եւ անհունութեան մէջ երբ կը փնտռէ որեւէ բան մը որուն կառչի եւ որուն վրայ ապահով զգայ ինքզինք։

Գիշերուան ժամը 10.15ին հնդկական ժամով կ'իջնենք օդակայան. 3.30 ժամի տարբերութիւն ունինք առաւելութեամբ Պէյրութի վրայ։ Ոչինչ կրցայ ճշդել հսկայական քաղաքէն որ Կալկաթան էր երբ վերէն կը դիտէի իր տարածուն լոյսերը։ Գանգէսը, սրբազան գետը, դպրոցի յիշողութենէս ծանօթ պիտի թուէր ինծի։

Կ'իջնեմ սանդուղներէն սրտատրոփ երբ ինծի կը ժպտէր առաջին հայ ընտանիքը որ իր տղուն օդակայան աշխատելու առաւելութիւնն ունէր կարենալ մինչեւ օդանաւ մօտենալու համար։ Քիչ մը հեռուն Տէր Արամայիսն էր, նախկին ազատ ուսանող Ժառանգաւորաց Վարժարանին մէջ Երուսաղէմ, որ այժմ քահանայ է Կալկաթա, կը ժպտէր։ Կը մօտենամ իրեն եւ կը համբուրուինք սրտագին. այդ համբոյրին մէջ կար ջերմութիւնը հին ծանօթութեան որ օտար այս ափին վրայ

digitised by A.R.A.R.@

կը բազմապատկուէր Երուսաղէմի կարօտներով։ Անցագրային և մաքսային կարգադրութիւնները եղան արագ, շնորհիւ այն բարի և յարգալից վարմունքին որ հնդիկ պաշտօնեային է մեծաւորի մը նկատմամբ։ Սրահը կը սպասէր բազմութիւնը բարի գալստի եկողներու։ ՆԵՌՆ լոյսերու տակ կրցայ անմիջապէս զատորոշել բոլորին հայկական դիմագիծը, այնքան նման միւս ամբողջին. Նոյն աչքերը, արտայայտիչ ու խօսուն, քիթն ու գոյնը, կազմուածքը։ Կլիման, հեռաւորութիւնները, պանդխտութիւնը ոչինչ փոխած են իրենցմէ։ Աւելի մութ գոյնը կը խորհէի գիրենք. այնքան լսած էի Կալկաթայի սոսկալի տաքին ու մանաւանդ խանձող արևին մասին, որուն շատ կարճ փորձառութիւնը ես ալ պիտի ունենայի։ Տէր Արամայիս ներկայացուց զանոնք ինծի զատ զատ։ Բայց վայրկեանին յուզումը և հոգեկան խռովքը կարծես խցած էին ականջներս և ես կը թուէի լսել օտար հնչումներ, անծանօթ անուններ ինծի։ Վերջը պիտի իմանայի որ անգլիացուցած էին զանոնք գրեթէ բոլորը, շատ հաւանաբար դիւրին ընծայելու համար անոնց արտաբերումը օտարներուն կողմէ։ Մեր յաւիտենական ԵԱՆը, մեր ծանօթացման յատկանիշը դադրած էր գործածական ըլլալէ։

Կը նստիմ եկեղեցւոյ կառքին մէջ. զիս կը սպասէ ուրիշ քահանայ մը, Տէր Բագրատ Դաւթեան, Հայ Եկեղեցւոյ ծերունազարդ սպասաւոր մը, Նոր Ջուղայեցի, իր բարի խօսքերով։ Ռուսահայերէնի մօտ լեզու մը կը խօսին բոլորը, Նոր Ջուղայի գաւառաբարբառը՝ որուն մէջ մերթ պարսկական բառեր և ասութիւններ են սպրդած։ Բայց չէ՞ որ նորէն մեր ոսկեղինիկ լեզուն է, նոր տարազի մը մէջ այս անգամ, որ այնքան քաղցր կը հնչէ, ամբողջութեամբ օտար այդ մթնոլորտին մէջ։ Ինքնաշարժերու թափորը կ'ուղղուի քաղաք։

Կէս գիշերուան մօտեցող այդ ժամուն կը հնչեն Եկեղեցւոյ զանգակները ուրախ, որ կը լողայ լոյսերու մէջ։ Տօնի օր կարծէք բոլորիս համար։ Կուտամ Սրբազանին և Ս. Տեղեաց ողջոյնները, շնորհակալութիւն կը յայտնեմ իրենց. կը նայիմ հետաքրքրուած և զուարթ։ Պիտի ըլլայի իրենց հետ մինչև Ս. Յարութեան տօնը, պաշտամունքի, քարոզի, այցելութեան մխիթարութիւնը բաժնելով մեր ազգի և Եկեղեցւոյ պանդուխտ որդիներուն։ Անոնց ի տես լեցուեցայ իմ ասպարէզիս գիտակցութեամբ և հաւատքով։ Շատ բան կը սպասէ տակաւին մեր ժողովուրդը իր եկեղեցականէն և որքա՜ն ան արժանի պիտի ըլլայ այդ վստահութեան։ Գիտեմ որ ժողովուրդն է որ կը շինէ իր եկեղեցականութիւնը։ Ան իբրև զաւակ ժողովուրդի կը զարդարուի անոր բոլոր շնորհներով և երբեմն անոր մեղքերուն կնիքն ալ կը կրէ իր վրայ։ Զարմանալի չէ որ հաւատաւոր ժողովուրդներու մէջ խորունկ հաւատքով և նուիրումով եկեղեցականներու կարելի ըլլայ հանդիպիլ։ Շատ անգամ Եկեղեցւոյ քննադատութիւնները կուգան մեր ժողովուրդին ներքին ուրացումներէն և նահանջներէն, որոնք թերևս պարտադրուեցան իրեն իր ճակատագրէն։ Այդ ճակատագիրը փոխելու գերագոյն ճիգը դարձեալ բաժինը պիտի ըլլայ Եկեղեցիին։ Խորհիլ որ Կալկաթայի, ինչպէս ամբողջ հեռաւոր արևելքի մէջ Եկեղեցին տակաւին ազգայնական վերջնական դրօշմը կը դնէ իր զաւակներու կեանքին վրայ։ Ու գալ նորէն ճշմարտութիւն դարձած այն իրողութեան, որ մեր Եկեղեցին իր հոգևոր գործունէութեամբ դարերու տրամութեանց մէջէն մեր գոյութիւնը բերած է այս օրերուն։ Վստահօրէն մեր հոգեկան ոյժերուն է որ մենք կրցած ենք ապահովել մեր կեանքը թէ իբրև մշակոյթ և թէ իբրև ֆիզիք և զանոնք ջամբողը մեզի եղած է մեր Քրիստոնէական Ս. Հաւատքը։

Կը բաժնուինք կէս գիշերէն վերջ։ Զիրար պիտի կրնայինք տեսնել յաճախ։ Պիտի խորանային հետզհետէ մեր ծանօթութիւնները ու վերածուէին բարեկամական այն կապին որ ամուր և հաստատուն թելերով կապեց իմ սիրտս Հնդկահայութեան։ Եկեղեցականներու բնակարանին մէջ յարկաբաժին մը պատրաստած էին ինծի համար ուր կ'առանձնանամ օրուան յոգնութիւններէս և յուզումներէս կազդուրուելու։

(Շարունակելի՝ 1) ԲԱԲԳԷՆ ՎՐԴ.

digitised by A.R.A.R.@

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 22 Մայիս. — Ս. Պատարագը՝ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ մատոյց Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեան։

● Դշ. 25 Մայիս. — Վաղուան Համբարձման տօնին առթիւ, կէսօրէ ետք ժամը 1.30ին, Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տանտեանի գլխաւորութեամբ, Հոգ. Հայրեր ինքնաշարժերով բարձրացան Ձիթենեաց լեռ։ Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը կատարուեցան մեծավայելուչ հանդիսաւորութեամբ, Համբարձման Սրբավայրին մէջ կառուցուած մեր վրանամատուռին տակ։ Իրիկնագէմին կատարուեցաւ «Էջնայէ»ի կարգ, ինչպէս նաև գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները։

● Եշ. 26 Մայիս. — ՀԱՄԲԱՐՁՈՒՄ: Առաւօտեան ժամը 7ին, Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի գլխաւորութեամբ, ամբողջ Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Ձիթենեաց լեռը ու քիչ ետք «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման Սրբատեղին։ Մեր վրանամատուռին տակ հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և Համբարձման խորհուրդին շուրջ քարոզեց Գեր. Հանդիսապետ Ս. Հայրը և ապա նախագահեց Սրբավայրին առջև կատարուած «Անդաստան»ին։

● Շբ. 28 Մայիս. — Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Համբարձում վերնամատրան մէջ մատոյց Հոգ. Տ. Վազգէն Աբղ. Գըպըրըլեան։

— Երեկոյեան ժամերգութիւնը, Կիրակմուտքն ու վաղուան նախատօնակը պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեանի։

● Կիր. 29 Մայիս. — Երկրորդ Ծաղկազարդ: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ։ Ժամարարն էր նոյն վանքի Տեսուչ՝ Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գասպարաճեան։

● Շբ. 4 Յունիս. — Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ մատոյց Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան։

— Հոգեգալստեան նախատօնակը հանդիսաւորապէս պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, Ամեն. Տեղապահ Ս. Հօր նախագահութեամբ։

— Իրիկնագէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան հանդիսաւոր «Էջնայէ» և Հսկումն Արարողութեանց հանդիսապետն էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան։

● Կիր. 5 Յունիս. — ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ: Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան։

— Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան», նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեանի։

● Շբ. 11 Յունիս. — Ս. Պատարագը Մայրավանքի տանիքի՝ Ս. Հոգւոյ մատրան մէջ մատոյց Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գասպարաճեան։

● Կիր. 12 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Վազգէն Աբղ. Գըպըրըլեան։

— Ս. Հռիփսիմեանց նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեանի։

● Բշ. 13 Յունիս. — Տօն Ս. Կուսանացն Հռիփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հռիփսիմեանց մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան։

● Ուր. 17 Յունիս. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան նախատօնակը պաշտուեցան Մայր Տաճարին մէջ։ Հանդիսապետն էր Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան։

● Շբ. 18 Յունիս. — Տօն Ս. Գրիգորի Լուսաւորչին (Ելն ի վիրապէն): Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւանդատան Ս. Գր. Լուսաւորչի Սեղանին վրայ մատոյց Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեան։

— Երեկոյեան ժամերգութիւնը, Կիրակմուտքն ու վաղուան նախատօնակը պաշտուեցան Մայր Տաճարին մէջ։ Հանդիսապետն էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան։ Ըստ սովորութեան, նախատօնակէն ետք երգուեցաւ «Տէր Ողորմեա»։

● Կիր. 19 Յունիս. — Տօն Կաթ. Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան։

● Կիր. 26 Յունիս. — Ս. Պատարագը՝ Ս. Յարութեան Տաճարի Բ. Գողգոթայի վերնամատրան մէջ մատոյց Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան։

●

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Շբ. 21 Մայիս. — Առաւօտուն, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը վանական գործերով մեկնեցաւ Իսրայէլ, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Բաբգէն Վրդ. Ապտեանի, որ հինգ ամիսներու բացակայութենէ մը ետք կը վերադառնար Յոպպէի Հայոց Հոգևոր Հովուութեան իր պաշտօնին։ Տեղապահ Ս. Հայրը վերադարձաւ յաջորդ օրը։

— Կ. վ., Քաղաքիս Ambassador Hotelին մէջ, American Friends of the Middle Eastի ներկայացուցիչներու կողմէ, ի պատիւ Տոքթ. և Տիկ. Elmer Bergerի տրուած ընդունելութեան ներկայ եղան Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան և Տիար Կարապետ Հինդլեան։

digitised by A.R.A.R.@

● Կիր. 22 Մայիս.— Իսլամաց Ռամազանի տօնին առթիւ, առաւօտեան ժամը 9ին սկսեալ, Բարձր. Տ. Խադ Արքեպս. Աճէմեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի եւ Տիար Կ. Հինդլեանի, շնորհաւորական այցելութիւն տուաւ Քաղաքիս Կառավարիչին, Ոստիկանապետին եւ Քաղաքապետին։

● Բշ. 23 Մայիս.— Կէսօրէ առաջ, Բարձր. Տ. Խադ Արքեպս. Աճէմեան եւ Ամեն. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի եւ Տիար Կ. Հինդլեանի, շնորհաւորական այցելութիւն տուին Քաղաքիս Մուֆթիին, իր բնակարանին մէջ։

● Դշ. 25 Մայիս.— Կէսօրէ ետք Բարձր. Տ. Խադ Արքեպս. Աճէմեան օդային գծով մեկնեցաւ Անթիլիաս։ Մինչեւ օդակայան ուղեկցած էին Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան եւ Հոգ. Տ. Տ. Հայրիկ եւ Յակոբ Վարդապետներ։

● Դշ. 31 Մայիս.— Ս. Ուխտիս երիտասարդ Միաբաններէն Հոգ. Տ. Գէորգ Աբղ. Նազարեան մեկնեցաւ Պարսկաստան, ի տես իւր ծնողաց։

● Եշ. 2 Յունիս.— Երեկոյեան, Իտալական Հիւպատոսարանի մէջ, Իտալիոյ ազգային տօնին առթիւ սարքուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Տեղապահ Ս. Հայրը, Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան եւ Տիար Կարպիս Հինդլեան։

● Կիր. 5 Յունիս.— Կէսօրէ ետք, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը եւ Գեր. Տ. Թաւրէն Արքեպս. Մանաստեան վանական գործերով մեկնեցան Իսրայէլ եւ վերադարձան Դշ. 7 Յունիսին կ. ա.։

● Բշ. 6 Յունիս.— Կէսօրէ ետք, տեղւոյս Արաբ Անկլիքան համայնքի հիմնարկութեան Ոսկեայ Յոբելեանին առթիւ, St. George's եկեղեցւոյ մէջ կատարուած գոհաբանական մաղթանքին եւ ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան։

● Եշ. 9 Յունիս.— Կէսօրին, Բրիտանական Հիւպատոսարանի մէջ, Անգլիոյ Ն. Վ. Թագուհւոյն ծննդեան տարեդարձին առթիւ սարքուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Տեղապահ Ս. Հայրը, Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան եւ Տիար Կարպիս Հինդլեան։

— Կէսօրէ ետք, St. George's Upper Schoolի տարեկան մարզահանդէսին ներկայ եղան Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան եւ Հոգ. Տ. Վազգէն Աբղ. Դըպըրըլեան։

● Ուր. 10 Յունիս.— Կէսօրէ ետք, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը օդային գծով մեկնեցաւ Պէյրութ, անկէ Ս. Աթոռոյս վերաբերեալ գործերով այցելելու համար Եւրոպայի զանազան քաղաքները։ Մինչեւ օդակայան ուղեկցած էին Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան, Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան եւ Տիար Կ. Հինդլեան։

● Շբ. 11 Յունիս.— Կէսօրէ առաջ, Քաղաքիս Յունական Ընդհանուր Հիւպատոսը այցելեց Պատրիարքարան։

● Կիր. 12 Յունիս.— Կէսօրէ ետք, Պետական Թանգարանին մէջ, Ն. Վ. Կառավարիչի նախագահութեամբ, Mr. Max Lockի կողմէ Քաղաքիս ծրագրումը նիւթին շուրջ տրուած դասախօսութեան ներկայ եղաւ Հոգ. Տ. Վազգէն Աբղ. Դըպըրըլեան։

● Բշ. 13 Յունիս.— Առաւօտուն, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի Ամավերջի քննութեանց։

● Շբ. 18 Յունիս.— Կ. ե. ժամը 4ին, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ս. Թ. Վարժարանի տարեկան Փազարին։

— Նոյն ատեն, St. George's Upper Schoolի Ամավերջի Մրցանակաբաշխութեան հանդէսին ներկայ եղաւ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան։

● Եշ. 23 Յունիս.— Առաւօտուն, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ս. Թարգմանչաց Վարժարանի Ամավերջի քննութեանց։

● Ուր. 24 Յունիս.— Կէսօրէ ետք, Եւրոպացւոց Ս. Յովհ. Կարապետի ծննդեան տօնին առթիւ, St. John's Ophtalamic Hospitalի պարտէզներուն մէջ սարքուած ընդունելութեան ներկայ եղաւ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան, ընկերակցութեամբ Տիար Կարպիս Հինդլեանի։

● Շբ. 25 Յունիս.— Կէսօրէ ետք, Պաղեստինի Հնագիտական Թանգարանի սրահին մէջ, «Les douilles de Khirbet Qumran» նիւթին շուրջ, R. P. de Vauxի կողմէ տրուած դասախօսութեան ներկայ եղաւ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան։

●

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շնորհակալութեամբ ստացանք Ազն. Օր. Սիրարփի Տէր Ներսէսեանէ, մեր Ձեռագրաց Ցուցակի տպագրութեան նուէրն, 45 տոլար, եւ իր միջոցաւ

| | | |
|---|---|---|
| Տէր եւ Տիկ. Պալքայեանէ | դ. | 20 |
| Պր. Տաղլեանէ | » | 10 |
| Պր. Պըշտոնէ | » | 25 |

**Տեսուչ Ձեռագրատան Ս. Յակոբեանց**
**ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

المدير والمحرر المسؤول – الآب هايكازون أبراهاميان
المدد ٦
تصدرها – بطريركية الارمن الارثوذكس
تطبع في مطبعة دير الارمن – القدس
يونيو ١٩٥٥
Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Haïgazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@

## «ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԻՏԷԱԼ ԿԵԱՆՔԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ ԲԱՆԱԼԻՆ (Սրտիս Բեմէն)։ Հայկազուն Քհնյ. Ոսկերիչեան (Նուիրատու)։
ԱՍՏՈՒԱԾԱՏԻՊ ՄԱՐԴԸ։ Ա. եւ Բ. Հատորներ։ Հայկազուն Քհնյ. Ոսկերիչեան (Նւրտ.)։
ԵՐԳԱՐԱՆ ՄԱՍԻՍ – Ա. Պրակ։ Հրատ. եւ նուէր «Մասիս» Մատենաշարի։
ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ – Գ. Հատոր։ Նուէր Հոգ. Տ. Մեսրոպ Աբղ. Եումուրթաճեանէ։
SCIENTIFIC AIR POSSIBILITIES WITH THE HUMAN. Zabelle Abdalian (donor).
ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ – Հատոր Ա.։ Հովիւ Կարապետ Գ. Ալ-գանեան։ Նուէր Սուրէն Գ. Պօնապարթեանէ (արտատպող)։
ՈԳԻԻ ՈՒԺՈՎ։ Արմէն Սեգա (Նուիրատու)։
ԿՈՐԻՒՆ – Վարք Մաշտոցի։ Հրատ. եւ նուէր «Յուսարեր»էն։
ԾԱՂԿԱՁՈՐ։ Յարութիւն Տապաղեան (Նուիրատու)։
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ (Վասպուրականի գաւառաբարբառով)։ Յ. Տապաղեան (Նւրտ.)։
Ամերիկայէն, Պր. Եդուարդ Ալէքսանեան կը նուիրէ հետեւեալ երեք գիրքերը.—
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՍԵԲԱՍՏԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 3րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ (1939)։
» » » 10րդ » (1948)։
A MEMORANDUM ON THE ARMENIAN QUESTION.
Ուիլեըմ Սարոյեան կը նուիրէ իր հրատարակած 19 գիրքերը։
ՇՆԻԿ ՍԵՒՈՆ (Երախտագէտը)։ Յ. Թ. Հինդլեան։ Նուէր Տօքթ. Վահէ Հինդլեանէ։
ԱՆՀՆԱԶԱՆԴ ՃԱԳԱՐԸ։ Յ. Թ. Հինդլեան։ Նուէր ըստ վերնոյն։
ՃԱՄԲՈՒՍ ԾԱՅՐԸ – Ա. Հատոր (Բ. Յուշարար)։ Վահան Մալէզեան (Նուիրատու)։
ԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ։ Վաչէ Ատովմեան (Նուիրատու)։
GREAT SHORT STORIES. Anoushavan J. Simonian (presented by him).
ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ԿԱՆԹԵՂԸ։ Շահան Պէրպէրեան։ Նուէր Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեանէ։
ԾՈՂՈՔՈՐԹԸ (Կատակերգթ. 3 Արար)։ Յ. Պարոնեան։ Հրտ. եւ նուէր Հայկաշէն Դրատան։
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ – Ա. Մաս։ Երուանդ Հայրապետեան (Նւրտ.)։
Ներսէս Յ. Պարսամեան կը նուիրէ իր ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ 5 դասագիրքերը։
Ոմն կը նուիրէ Կիլիկիոյ Կաթ. Կիրակ. Դպրոցներու Ցորեկինական գրքոյկը։
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ։ Եղիշէ Պատրիարք Դուրեան։ Նուէր Ս. Աթոռոյ Տպարանէն։
ՕՐԱՑՈՅՑ (1955)։ Նուէր ըստ վերնոյն։
ՕԹԹՕ Գ. (Թատերգութիւն 4 Արար)։ Յոլակ Հիսարլեան (Նուիրատու)։
ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՆՈՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ։ Ներսէս Պատր. Վարժապետեան։ Հրատ. եւ նուէր Նուպար Պէրպէրեանէ։
ԾԱՌՈՒՂԻ։ Կ. Պօյաճեան (Նուիրատու)։
Տօքթ. Վահէ Հինդլեան կը նուիրէ Յ. Թ. Հինդլեան Հրատ. Ֆոնտի 5 գիրքերը։
ՀԱՅՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ – Ջ. Տարի (1955)։ Վարդան Քհնյ. Ժամկոչեան (Նուիրատու)։
Տիկ. Զապէլ Սիմոնեան կը նուիրէ մէկ տարուայ Ամերիկեան TIME Շաբաթաթերթը։
Տիկ. Ա. Ա. Շաղօեան կը նուիրէ Ամերիկեան READERS DIGEST Ամսաթերթը։
Ամմանի British Councilը կը նուիրէ հետեւեալ թերթերը.—
ա) COUNTRY LIFE · բ) ILLUSTRATED LONDON NEWS գ) STUDIO
Ոմն կը նուիրէ Անգլիական ILLUSTRATED Շաբաթաթերթը։
ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԵԱՆՔԸ 1950-52ին։ Տօքթ. Վահէ Հինդլեան (Նուիրատու)։
25 ՏԱՐՈՒԱՆ ԿԵԱՆՔ ՄԸ։ Յ. Թ. Հինդլեան։ Նուէր ըստ վերնոյն։
25 ԱՄԵԱՅ ՀԱՆԴԷՍ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑի։ Նուէր ըստ վերնոյն։
Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ։ Նուէր ըստ վերնոյն։
ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԻԵՐԷՆԷ-ՀԱՅԵՐԷՆ New Method Readersի։ Նուէր Կ. Տօնիկեանէ։
ԵՐԵՔ ՍՈՒՐԲԵՐ։ Գ. Գ. Խայիկեան։ Նուէր Ս. Պագալեանէ։

digitised by A.R.A.R.@

## ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

# ԶԱՒԷՆ ԵԿԷՆԵԱՆԻ

## ՄԱՐԴԸ ՎԵՐ ԱՍՏՂԵՐԷՆ

Քերթուածներու հատոր

Գին 4 Շիլին　　　　Էջ 80

---

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ – 1955։ Կարօ Գէորգեան (Նուիրատու)։

Տօքթ. Վահէ Հինդլեան կը նուիրէ Յ. Թ. Հինդլեանի 4 գիրքերէն։

DEWEY DECIMAL CLASSIFICATION AND RELATIVE INDEX. Melvil Dewey. Standard (15th) Edition Revised. Presented by Rev. Father Dirayr Dervishian (California).

ԱԿՆ ԵՒ ԱԿՆՑԻՔ։ Առաքէլ Քէչեան։ Նուէր Ամերիկայի Ակնայ Հայրենակց. Միութենէն։

ԻՄ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆՍ – Ա. Հատոր. Պօղոս Վ. Պզտիկեան։ Նուէր Մեսրոպեան Վրժ.էն։

ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁ ՍԱՐԳԻՍԸ – Վէպ։ Արամ Սահակեան (Նուիրատու)։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԵՒ Ն. ՓԱԼԱՆՃԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ 25ԱՄԵԱԿ։ Նուէր «Համազգային»էն։

ՃՐԱԳ – Գիրք Գ.։ Ա. Ա. Պետիկեան (Նուիրատու)։

Ս. Եփսիկեան կը նուիրէ Անգլիերէն գրքոյկ մը։

Վսեմ. Գալուստ Կիւլպէնկեան կը նուիրէ 16 հատորնոց CHAMBERS' ENCYCLOPAEDIA.

ԽԱՉԻՆ ՃԱՄԲԱՆ (Դրուագներ 1915–1925)։ Ծատուր Պէրպէրեան (Նւրտ.)։ Փարիզ, 1955։

Հ. ՆԵՐՍԷՍ Վ. ԱԿԻՆԵԱՆ (Իր 50ամեայ գրական գործունէութեան առթիւ)։ Գրեց Հայր Վահան Վ. Ինգլիզեան։ Նուէր Մխիթարեան Տպարանէն, Վիեննա, 1954։

ՅՈՒՇԱՐՁԱՆ – Հովիւն ու Մշակը։ Հայկազուն Ս. Քհ. Ոսկերիչեան (Նւրտ.)։ Աղեքսանդրիա։

ԳՐԱԳԷՏԸ ՈՐ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՓՆՏՌԵԼՈՒ ԵԼԱԾ Է։ Շ. Նարդունի։ Նուէր «Ալիք»էն։

ՇՈՒՇԻԿԻՆ ԿԱՂԱՆԴԸ (Մանկ. Բիէս 2 արար 1 պատկեր)։ Ա. Տատրեան եւ Բ. Թեւեան։ Հրատ. եւ Նուէր «Պարտէզ»էն, Իսթանպուլ։

ՕՐԱՑՈՅՑ 1955 Ս. Փրկչի Հայոց Հիւանդանոցի (Նուիրատու)։ Իսթանպուլ։

LE DERNIER BAL DU GRAND SOIR ou LA REPUBLIQUE UNIVERSELLE. Pierre Hépess. Նուէր «Մշակ» Տպարանէն, Պէյրութ։

ՀԱՒԱՏՔ ԵՒ ԼՈՅՍ։ Ա. Նաւարեան։ Նուէր Ս. Աթոռոյս Տպարանէն։ 1954։

THE FALL OF THE AERIE. Aram Haigaz. Boston, 1935. Նուէր հեղինակէն։

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ – 1954։ Սիոն Եպս. Մանուկեան (Նուիրատու)։ Պ. Այրէս, 1954։

LA VIERGE MARIE DANS LA LITTERATURE MEDIEVALE DE L'ARMENIE. Jean Mécerian. Նուէր հեղինակէն։

ARMENIAN COMPANION TO READER I – New Method Readers – Michael West. Նուէր [Հայկ Թովմասեանէ։

ԲԱՌԱԳԻՐՔ ԱՐԱԲ.-ՀԱՅ «Մուշաւագ»ի Գ. Հատոր։ Հայկ Թովմասեան (Նւրտ.)։ Պէյրութ։

ՑԵՂԻՍ ՈՒ ՀՈՂԻՍ ՀԵՏ։ Արշալոյս Բարայեան (Նուիրատու)։ Թէհրան, 1948։

ԱՅՍՊԷՍ ԱՆՑԱՆ ՕՐԵՐԸ։ Ա. Տէր Մինասեան (Նուիրատու)։ Իսթանպուլ, 1955։

Տօքթ. Պերճ Յակոբեան կը նուիրէ Ամերիկեան «Թայմ» Շաբաթաթերթի 54 Մյս.–Դեկտ.։

Ոմն կը նուիրէ մեքենագրուած թատերախաղ մը։

LE MUSEON. Ch. De Harlez. Paris, 1954 (Vol. LXVII, 1–2). Նուէր հրատարակիչէն։

ԿԵԱՆՔ ԵՒ ԳԻՐ – Տարեգիրք (1948)։ Կազմեց Հայկ Ժամկոչեան (Նուիրատու)։

Շահան Կառավարենց կը նուիրէ իր 4 գիրքերը (Տպ. Գահիրէ). —

ա) ԱՍՏՈՒԱԾՈՐԴԻՆ։　　բ) ԵՐԿՐԻ ԵՒ ԵՐԿՆԻ ԵՐԳԵՐ։

գ) ԿԵԱՆՔԻ ԲԱՌՈՒՂԻՆ ՎՐԱՅ։　　դ) ՁԱՅՆԵՐ, ՁԱՅՆԵՐ։

(Շարունակելի)

digitised by A.R.A.R.@